



2

դասարան

ԵՍ ԵՎ ՆՐՋՍԿԱ ԱՆԽԱՐԶԸ

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Թորոսյան Ն.,
Ալեքսանյան Լ.


2

դասարան

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ



«Աստղիկ Գրատուն»
հրատարակչություն
Երևան 2010թ.



ՀՏԴ 373.167.1:93/99:908:50(075.3)
ԳՄԴ 63.3+26.891+20.1 ց72
Թ 822

**ԴԱՍԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

Թ 822 **Ես և քոջակա աշխարհը:**

Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք
/Թորոսյան Ն., Ալեքսանյան Լ./-

Եր.: «Աստղիկ Գրատուն», 2010. 160 էջ:

ՀՏԴ 373.167.1:93/99:908:50(075.3)
ԳՄԴ 63.3+26.891+20.1 ց72

ISBN 978-99941-76-56-4

- © «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2010թ.
- © «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2007թ.
- © Թորոսյան Ն., Ալեքսանյան Լ., 2007թ.
- © Թորոսյան Ն., Ալեքսանյան Լ., 2010թ.

ԴԱՍ 1

ԻՆՉՈՎ ԵՄ ԵՄԱՆ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՄՅՈՒՍՆԵՐԻՑ

1. Նկարագրի՛ր. ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր:



2. Կարդա՛, ապա դու էլ լրացրու քո թերթիկը:

ԵՄ

- Բարև, իմ անունը Լևոն է:
- Ես չորս տարեկան եմ:
- Մազերս խարպչաշ են:
- Աչքերս խառն են:
- Ամենից շատ սիրում եմ հեղձաբնեյր :
- Ես չեմ սիրում երբ բարկանում եմ :
- Ես ուզում եմ մեծ տնակար դառնալ:
- Իմ սիրած խաղը սպանդուղիքն է :
- Ես տխրում եմ, երբ անչրե է զայխ :
- Ես ուրախանում եմ երբ ընկերներս բակ են կանչում :





3.

Համեմատեք թերթիկները և գտե՛ք, թե ինչով եք նման կամ տարբեր ձեր ընկերներից:



Մեր մասին խոսելիս, ինչպե՞ս ենք ինքներս մեզ անվանում:

ԲՈՒՆՈՐՆ ԷՆ ԵՍ ԵՆ

- Իմ ընտանիքի անեն անդամ **ես** է:
- Իմ բուլոր ընկերներն էլ **ես** են:
- Աղջիկներն էլ, տղաներն էլ **ես** են:
- Այդ բուլոր **ես**-երը մարդիկ են, որոնք շատ բաներով են իրար նման:
- Բուլորը **սիրելի** մարդիկ ունեն:
- Բուլորը **ծիծաղում** են ու **լալիս, ուրախանում** են կամ **տխրում**:
- **Լավ** կամ **վատ, քաջ** ու **բարի** բաներ են անում:
- Բուլորը սովորում են **ճանաչել** աշխարհը:



Կարո՞ղ ես շարունակել՝ էլ ի՞նչ են անում բուլոր **ես**-երը: Է՞լ ինչով են մարդիկ իրար նման:



4.

Ներկիր բթամատդ և մաքուր բղթի վրա դրոշմիր մատնահետքը: Համեմատիր այն ընկերներիդ մատնահետքերի հետ:



ՔՈՒՈՐՆ ԷՆ ԱՆԿՐԿՆԵԼԻ ԵՆ



Ինձ դուր է գալիս, որ ես մի քիչ նման եմ աշխարհի բոլոր մարդկանց:

Քայց շատ բաներով էլ տարբեր եմ:

Իմ դեմքից ուրիշ ոչ ոք չունի:

Իմ ձայնից ուրիշ ոչ ոք չունի:

Իմ թանաքոտ բթամատի թողած հետքից ոչ ոք չունի:

Ես տարբեր եմ նաև նրանով, թե ինչ եմ մտածում:

Ես տարբեր եմ նրանով, թե ինչ եմ զգում:

Ես անկրկնելի եմ:



Է՞լ ինչով եմ մարդիկ անկրկնելի:



Տնային առաջադրանք

Շարցուփորձ արա քո անվան մասին և լրացրու հարցաթերթիկը:


- Ո՞ր երկրից է եկել:
- Ի՞նչ է նշանակում:
- Ո՞ւմ պատվին է դրված:




1.

Ուշադիր նայեք նկարին և թվարկեք.

- այն ամենը, ինչը կարելի է տեսնել,
- այն ամենը, ինչը կարելի է լսել,
- այն ամենը, ինչի հոտը կարելի է զգալ,
- այն ամենը, ինչը կարելի է համտեսել,
- այն ամենը, ինչը կարելի է շոշափել:





Իմ հինգ օգնականները

Աշխարհը լիքն է ձայներով, բույրերով, տեսարաններով և բաներով, որ կարելի է շոշափել ու համտեսել: Աչքերս, ականջներս, մատներս, քիթս և բերանս օգնում են, որ ես ճանաչեմ ու կարողանամ ընտրել իմ սիրած բաները: Նրանց օգնությամբ սովորածը ես հիշում եմ: Հիշում եմ, որ կիտրոնը թթու է, շաքարը քաղցր է, իսկ վարդն անուշ հոտ ունի: Հիշում եմ նաև, որ վարդ քաղելիս փուշը մատս ծակեց: Մյուս անգամ զգույշ կլինեմ:










2.

Տարբերակեք բառերը.

ինչո՞վ ենք զգում, ինչո՞վ ենք իմանում.

հեռու, աղի, ծուխ, աղմուկ, մոտիկ, երգ, կծու, խունկ, հարթ, փափուկ, լույս, թթվաշ, մռնչյուն, համեղ, մութ, սուր, ծլվլոց, օծանելիք, տաք, գեղեցիկ, կոշտ, խշխշոց, քաղցր, սառը, ծաղիկ, թակոց, դառը, ճիչ, տգեղ:

| | | | | |
|---|---|---|---|--|
|  |  |  |  |  |
| |  |  | | |

3. Ի՞նչ կզգաս, ի՞նչ կմտածես, ի՞նչ կանես.



- Այրվածի հոտ է գալիս:




- Շունը հաշում է վրադ:



- Մայրիկը գրկել է քեզ:



- Նվեր ես ստացել:



- Ասեղով ծակել ես մատդ:



- Ջարմանալի բան ես լսել:



4.

Դիմախաղով որևէ զգացմունք ցույց տվեք միմյանց
և փորձե՛ք կռահել.

ուրախություն, զարմանք, վախ, զայրույթ,
գոհունակություն, ցավ, զզվանք, տխրություն և այլն:



Տնային առաջադրանք

Դու՛րս եկեք զրոսանքի և գրանցե՛ք.



տեսա



լսեցի




հոտ առա




շոշափեցի



համտեսեցի



ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ ՈՒ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ




- Հայկն ապրում է հայրիկի, մայրիկի, քույրիկի ու պապիկի հետ: Նրանք ընտանիք են:



- Լուսիկը ապրում է մայրիկի հետ: Նրանք էլ են ընտանիք:



- Աստղիկն ապրում է հայրիկի, մայրիկի, հորաքրոջ ու պապիկի հետ: Նրանք էլ են ընտանիք:



- Գագիկը հայրիկի ու քույրիկի հետ է ապրում: Նրանք էլ են ընտանիք:

Ընտանիքները կարող են տարբեր լինել մեծ կամ փոքր: Բայց բոլոր ընտանիքներն իրար նման են նրանով, որ ընտանիքում բոլորն իրար օգնում են, ուրախանում են, երբ մեկն ուրախ է, տխրում են, երբ մեկը տխուր է: Ընտանիքում բոլորը սիրում են միմյանց:



- Ինչպե՞ս եք ընտանիքում հոգում իրար մասին:
- Ինչպե՞ս եք ընտանիքում օգնում միմյանց:
- Ե՞րբ եք բոլորով ուրախանում:
- Ի՞նչն է ձեզ տխրեցնում:

1. Ամեն ընտանիք ունի կարիքներ՝ հագուստի, սննդի, մաքրության, խնամքի, սիրո և այլն:

Քո ընտանիքում ովքե՞ր են հոգում այդ կարիքները:

սնունդ

հայրիկը, մայրիկը, տատիկը....

հագուստ

մաքրություն

խնամք

սեր



- Իսկ դու մասնակցո՞ւմ ես քո ընտանիքի կարիքները հոգալուն: Ինչպե՞ս:


ԻՄ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ



Մեր հայրիկներն ու մայրիկներն էլ հայրիկ ու մայրիկ ունեն. դրանք մեր տատիկներն ու պապիկներն են: Քույրեր, եղբայրներ էլ կարող է ունենան: Նրանք մեր մորաքույրը, հորաքույրը, քեռին կամ հորեղբայրը կլինեն: Քեռու, հորեղբոր, մորաքրոջ կամ հորաքրոջ երեխաները մեր զարմիկներն ու զարմուհիներն են: Թեև կարող է իրար հետ չապրենք, բայց բոլորս ազգականներ ենք, ու միասին մենք մի մեծ ընտանիք ենք կազմում:



Իմ ընտանիքի ծառը



«Իմ ընտանիքի ծառը» նկարի օրինակով պատկերիր քո ընտանիքը և ազգականներին՝ կենտրոնում գրելով քո անունը, ապա հայրիկի, մայրիկի, քույրիկների կամ եղբայրների, ապա մյուս ազգականների:

ՓՈՒՍԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆԶ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՈ՞Ւ ՊԻՏԻ ԱՆԵՍ



Իմ շնիկը երբ կուզի՝ կքնի, իսկ ես պիտի շուտ քնեմ, որովհետև շնիկը դպրոց չի գնում, իսկ ես պիտի շուտ արթնանամ, որ դպրոց գնամ:

Շնիկիս թափթփած խաղալիքները ես պիտի հավաքեմ, իսկ իմն ուրիշները չեն հավաքելու. դրանք էլ ես պիտի հավաքեմ:

Երանի՛ ես էլ շնիկ լինեի: Կուզեմայի՛ ուշ կքնեի, կուզեմայի՛ ամբողջ օրը կխաղայի ու դպրոց չէի գնա:

Բայց, չէ՛, շնիկն էլ չի կարող միշտ ուզածն անել:

Չի կարելի, որ կրծած ոսկորը սենյակ բերի, նույնիսկ, եթե շա՛տ է ուզում:

Չի կարելի, որ իմ անկողինը ցատկի, նույնիսկ եթե շա՛տ է ուզում:

Բաներ կան, որ շնիկս պիտի անի, բաներ կան, որ ես պիտի անեմ: Բաներ կան, որ մեծերը պիտի անեն:

Հայրիկն ու մայրիկը պիտի աշխատանքի գնան, նույնիսկ, եթե հավես չունեն:

Հայրիկս պիտի խանութ գնա, նույնիսկ, եթե հավես չունի:

Մայրիկս պիտի ճաշ պատրաստի, նույնիսկ, եթե քաղցած չէ:

Է՛հ, երևի, բոլորն էլ կուզեմային ինչ-որ

բաներ չանել, բայց պիտի անեն:

Ինչպես բոլորը, այնպես էլ ես:



- Ինչո՞ւ է պետք իրար օգնել:
- Ի՞նչ կլինի, եթե տանը ամբողջ գործը միայն մեկն անի:
- Ո՞ր դեպքում գործն ավելի արագ կարվի:

1. Գրի՛ր ջո ընտանիքի անդամների անունները, իսկ դիմացը գրիր, թե նկարներում պատկերված տնային գործերից որն ով է անում:

լվացք անել



արդուկ անել



գնումներ անել




անկողինը հավաքել



ուտելիք պատրաստել



անսարք իրերը նորոգել



մաքրություն անել



այգին խնամել



սեղանը գցել



կենդանիներ խնամել



փոքրիկին խնամել



սենյակային ծաղիկները ջրել




ՄԱՐԿԵՏԻՆԳ ԳՐԱԴԱՐԱՆ
ՎԱՐՈՒՄԻՆԻՍՏԻՆԻ
ՊՈՒՆԿՏՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՎԵՐՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՎԵՐՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՎԵՐՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՎ ՄԱՐԻԿԸ



1. Հավ Մարիկն իր ճուտիկների հետ ապրում էր անտառի եզրի իր փոքրիկ տնակում: Մի օր ցորենի հինգ հատիկ է գտնում:



2. - Կօզնե՞ք՝ միասին ցանենք ցորենը, - խնդրում է բաղիկին, շնիկին և փխիկին:

- Վա՛յ, չէ՛, չէ՛, - ասում են նրանք, - մենք ժամանակ չունենք:



3. Փխսիկը, Շնիկն ու Բադիկը խաղում են, իսկ Հավ Մարիկն ու ճուտիկները գործ են անում:

- Կօզնե՞ք՝ ցորենը հնձենք ու ալյուր աղանք, - Հավ Մարիկը նորից է խնդրում ընկերներին:

- Վա՛յ, չէ՛, չէ՛, - ասում են նրանք, - մենք ժամանակ չունենք:



4. -Ո՞վ ինձ կօզնի հացն ուտել, - կանչում է Հավ Մարիկը:

- Ես, ես, - վրա է տալիս Փխսիկը:

- Ես էլ, ես էլ, - ասում են Շնիկն ու Բադիկը:



5. - Ինձ իմ ճուտիկներն օզնեցին, որ ցորենը ցանենք, հնձենք, ալյուր աղանք ու խմոր հունցենք: Նրանք էլ ինձ կօզնեն հացն ուտել:

















Հավ Մարիկը ճի՞շտ վարվեց: Ինչո՞ւ:




Տնային առաջադրանք

Լուծիր գաղտնագիրը՝ նկարների փոխարեն տառերը տեղադրելով:

| | | | | | | |
|--|---|---|---|---|--|---|
|  |  |  |  |  |  |  |
| Ա | Ի | Վ | ՈՒ | Ն | Կ | Շ |
|  |  |  |  |  |  |  |
| Տ | Ո | Խ | Լ | Դ | Չ | Ր |

| | | | | | | | | | | | | | |
|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|--|---|
|  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
| | | | | | | | | | | | | | |


| | | | | | | | | | | | | | | |
|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|--|---|---|
|  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
| | | | | | | | | | | | | | | |



Բոլորն էլ ամենօրյա գործերից կտրվելու և հանգստանալու կարիք ունեն։ Հանգստյան օրերին, տոներին ու արձակուրդներին ընտանիքները կարող են միասին հաճելի ժամանակ անցկացնել, հանգստանալ և մոռանալ հոգսերը։

Ընտանիքները տարբեր ձևերով են կազմակերպում իրենց հանգիստը։


Օրինակ՝ մեծ քաղաքներում ապրողներին կարող է դուր գալ բնության գրկում հանգստանալը, իսկ գյուղերի բնակիչներին՝ քաղաքներում ժամանակ անցկացնելը, թատրոն կամ թանգարան գնալը։





1.

Պատմե՛ք նկարներով, ինչպե՞ս են ընտանիքները հանգստանում:



● Պատմի՛ր, թե ե՞րբ և ինչպե՞ս է հանգստանում ձեր ընտանիքը:

2. Մեր ընտանեկան տոները

- Օրացույցի վրա գտի՛ր ձեր ընտանիքում նշվող տոն օրերը և կարմիր գույնով նշի՛ր դրանք:
- Ինչպե՞ս եք նշում այդ տոները:
- Ո՞ր տոնին ես ավելի անհամբեր սպասում: Ինչո՞ւ:



3. Տարբերակե՛ք նկարներն ըստ համապատասխան տոների. ո՞ր համարի նկարը ո՞ր տոնն է խորհրդանշում:



■ Սուրբ ծնունդ



■ Մայրիկների տոնը




■ Անկախության օր



■ Ջատիկ



■ Վարդավառ



■ Ծննդյան օր



■ Նոր տարի



● Ինչպե՞ս են մարդիկ շնորհավորում իրար այս կամ այն տոնի առթիվ:



Տնային առաջադրանք

Որևէ տոնի կապակցությամբ քո ձեռքով նվեր կամ շնորհավորական բացիկ պատրաստի՛ր:

ԻՄ ԴՊՐՈՅԸ, ԻՄ ԴԱՍԱՐԱՆԸ

Ինչո՞ւ եմ ես դպրոց գնում

Երբ առաջին անգամ դպրոց եկա, շատ շփոթված էի: Շուրջս բոլորն անծանոթ էին: Ո՞վ կլինի իմ ուսուցիչը, ինչպիսի՞ն կլինի իմ դասարանը: Հետո բոլորս ընկերներ դարձանք ու սովորեցինք միասին աշխատել: Սովորեցինք գրել, կարդալ, հաշվել, ընկերություն անել:



1. Նկարի օրինակով պատրաստե՛ք ձեր դասարանի «գնացքը».

Մեր դասարանը



- Թերթիկների վրա գրե՛ք ձեր անունները և փակցրե՛ք կողք կողքի:
- Փուչիկների վրա գրե՛ք ընկերությանն օգնող բառեր:
- Քարերի վրա գրե՛ք ընկերությանը խանգարող բառեր:



2. Նայե՛ք նկարներին՝

- Ի՞նչն է ընդհարումների պատճառը:
- Կարո՞ղ են բառերը խանգարել ընկերությանը:
Փորձե՛ք գտնել դրանք ու տարբերակել:
- Ի՞նչ բառեր գիտեք, որ օգնում են ընկերությանը:

| | | | | |
|---|--|--|--|--|
| | | | | |
| <p>- Թողանցնեն: - Մի կողմ քաշվիր:</p> | <p>- Գիրքս տե՛ղը դիր, հիմա՛ր: - Դու էլ, քո գիրքն էլ:</p> | <p>- Թող՝ ես ճոճվեմ: - Չեմ իջնի:</p> | <p>- Մամային կասեմ, որ չես օգնում: - Քո դասն է, ինքդ էլ արա, ես խաբար-բզկներին չեմ օգնում:</p> | <p>- Խո գ, ինձ էլ կոնֆետ տուր: - Դու որ չուտես էլ կլինի:</p> |

Նայե՛ք օրինակին և նոր երկխոսություններ գրեք՝ ընկերությանը խանգարող բառերը փոխարինելով ընկերությանն օգնող բառերով:


| | | | | |
|---|----------------|-----------------|----------------|----------------|
| | | | | |
| <p>- Անցիր, խնդրեմ: - Շնորհակալություն:</p> | <p>Լրացրու</p> | <p>Լրացրու՝</p> | <p>Լրացրու</p> | <p>Լրացրու</p> |




3.

Դիտե՛ք նկարները և ավարտե՛ք պատմությունը.


Փոքրիկ իշուկների պատմությունը




Իշուկները քաղցած էին, բայց թելը կարճ էր



Ինչքան ձգվում էին, չէին հասնում իրենց բաժին խոտին:



Քաշեցին, քաշքշեցին, մինչև հոգնեցին:



Գլուխները կախեցին ու սկսեցին մտածել...:



Ի՞նչ կարող են անել իշուկները, որ թե՛ կուշտ լինեն, թե՛ հաշտ:


ՈՒՐԱԳ ՈՒ ՄՂՈՅ
Մի՛ լինի ուրազի պես,
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,
Այլ եղիր սողոցի պես,
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:





Լրացրու՝ խաչբառը, գուշակելով նախադասություններում բաց թողնված «կախարդական» բառերը:

1. Ես անկարգություն էի արել և մայրիկից խնդրեցի:
2. Ուսուցչուհին ասաց. «....., Արմեն, դատո՛ւ լավ ես սովորել»:
3. Մարդիկ հանդիպելիս միմյանց «.....» են ասում:
4. «.....», - ասաց Նունիկը և հյուրերին ներս հրավիրեց:
5. «.....», - ասաց Լուսիկը՝ կարկանդակը տատիկից վերցնելով:
6. «.....», - ասաց տատիկը՝ կարկանդակը Լուսիկին տալով:



Ինչի՞ համար են կանոնները

Նոր խաղ խաղալու համար նախ և առաջ խաղի կանոններն ենք սովորում: Եթե խաղերը կանոններ չունենային, խառնաշփոթ կստացվեր:

Կանոնները հենց նրա համար են, որ խառնաշփոթ չլինի: Սպորտի մեջ էլ են կանոններ պետք, կյանքում էլ: Ընտանիքներն էլ կանոններ ունեն, երկրներն էլ: Խիստ կանոնները օրենքներ են կոչվում: Ամեն երկիր իր օրենքներն ունի: Կանոններ էլ կան, որ քաղաքավարի սովորություններ են, օրինակ՝ հերթը չխախտելը, այլ համբերատար հերթին սպասելը քաղաքավարություն է:

Օրենքները և կանոնները նրա համար են, որ մարդկանց օգնեն խաղաղ ապրել ու աշխատել միասին:





1.

Ուշադիր նայե՛ք նկարներին և ասե՛ք, թե նկարներում պատկերվածներն իրենց արարքներով ում են խանգարում, ինչպես, և ովքեր են դրանից տուժում:



Ուշացած ներս է մտնում:



Բուժետուն խախտում է հերթը:



Ղասը խանգարում է:



Ընկերոջ ձեռքից գրիչը խլում է:



Գետնին թուղթ է գցում:



Եստարանի վրա նկարում է:



Գիրքը նետում է ընկերոջը:



Առջևում նըստածի մագերը քաշում է:





«Ի՞նչ պիտի անեմ» ցանկից առանձնացրե՛ք այն նախադասությունները, որոնք կարող են օգնել «Ես ուզում եմ...» յուրաքանչյուր ցանկության իրականանալուն:

Օրինակ՝ Եթե ուզում եմ մաքուր դասարան ունենալ, ուրեմն պետք է աղբը գետնին չթափեմ, թղթերը զամբյուղը նետեմ, գրատախտակը մաքրեմ, հերթապահություն անեմ...

Ես ուզում եմ՝

1. մաքուր դասասենյակ ունենալ
2. շատ բան իմանալ
3. ընկերներ ունենալ
4. գեղեցիկ դասասենյակ ունենալ
5. ապահով լինել դպրոցում

Ինչ պիտի անեմ՝

| | | |
|------------------------------|--------------------------|---------------------------------------|
| թղթերն աղբի զամբյուղը գցեմ | չընդհատեմ ընկերոջս | գրատախտակը մաքրեմ |
| հերթապահություն անեմ | աղբը գետնին չթափեմ | լսեմ ուսուցչին |
| չխանգարեմ դասը | չվիրավորեմ ընկերներիս | սեղաններին չգրեմ |
| չհրմշտեմ ընկերներիս | աստիճաններով չվազեմ | կատարեմ ուսուցչի հանձնարարությունները |
| օգնեմ ընկերներիս | խնամեմ, ջրեմ ծաղիկները | լուսամուտից չկախվեմ |
| խնամքով վերաբերվեմ կահույքին | դպրոցի շենքից դուրս չգամ | չփչացնեմ դասագրքերը |



Օգտվելով «Ինչ պիտի անեն...» ցանկից՝
պատրաստե՛ք «Մեր դասարանի կանոնները» պաստառ
և փակցրե՛ք դասարանի պատին:



Տնային առաջադրանք

Մտածի՛ր և գրի՛ր երեք կանոն, որոնց հետևում են ձեր ընտանիքում:



ԻՄ ՓՈՋՐԻԿ ԱՇԽԱՐՀԸ



Իմ աշխարհին սկսվում է իմ տանից, բայց երբ դուրս եմ գալիս, աշխարհս ընդարձակվում է՝ նոր մարդիկ են հայտնվում այնտեղ: Ես շրջում եմ, որ տեսնեմ, թե նրանցից ով ինչով է զբաղվում: Հացի խանութից թարմ թխած հացի բույրն եմ զգում:

Բակերից տղաների ու աղջիկների ծիծաղն եմ լսում:

Բարևում եմ բոլորին, ուն ճանաչում եմ՝ հարևաններին, դպրոց գնացող

ընկերներին, ծաղիկ վաճառող մորաքրոջը,

պարտեզը ջրող պապիկին, կրպակում թերթ վաճառող քեռուն...

Մեր թաղամասից այն կողմ սկսվում է ուրիշ թաղամաս, բայց սա է իմը, այստեղ ես օտար չեմ:



Ձեր թաղամասում ի՞նչ շենքեր և ցուցանակներ կան, որ ձեզ օգնում են գտնել տան ճանապարհը:





1.

Լսե՛ք հեքիաթը:

Թե ինչ ՊԱՏԱՐԵՑ, ԵՐԲ ԶԱՍԻՆ ԽԱՆՈՒՆԵՑ ԲՈՒՆՐ ՅՈՒՅԱՆԱԿՆԵՐԸ



Կար-չկար, մի գեղեցիկ քաղաք կար կանաչ պարտեզներով, կոկիկ առանձնատներով, մաքուր, սալարկած փողոցներով: Քաղաքի բնակիչներն ամենուր բազմազան ցուցանակներ էին փակցրել, որ հեշտ կողմնորոշվեն: Վարսավիրանոցի ցուցանակին մկրատ ու սանր էր նկարված, ճաշարանի ցուցանակին՝ դանակ-պատառաքաղ, պարենային խանութը կարելի էր ճանաչել երշիկների ու ապխտած ձկան նկարներից և այլն, ու բոլորը սրամիտ ազդագրերով իրենց մոտ էին հրավիրում անցորդներին:

Երբ քաղաք հյուրեր էին գալիս, իսկույն գլխի էին ընկնում, թե որ տանն է կոշկակար ապրում, ում դուռը թակեն, եթե հագուստ են ուզում պատվիրել, և որտեղ կարելի է համտեսել քաղաքի ամենահամեղ հրուշակեղենը:

Մի գիշեր հանկարծ ուժեղ փոթորիկ է սկսվում: Սաստիկ քամին կտուրներից պոկում էր կղմինդրները, հաստաբուն ծառերն արմատախիլ անում: Քաղաքի հնաբնակներն անզամ այդպիսի փոթորիկ չէին հիշում:

Առավոտյան քամին հանդարտվում է, ու մարդիկ զգուշությամբ սկսում են տներից դուրս գալ՝ ամեն մեկն իր առօրյա գործերով:

Բայց ա՛յ թե՛զ բան: Պարզվում է, որ գիշերը քամին խառնել էր բոլոր ցուցանակները: Չեք պատկերացնի, թե ինչ



խառնաշփոթ սկսվեց: Ամենավատը զբոսաշրջիկների վիճակն էր: Նրանք, ճաշարանի ցուցանակը տեսնելով, դուռը բացում էին, որ մի կտոր բան ուտեին, իսկ սեղանին մուրճ, մեխեր ու հնամաշ կոշիկներ էին շարված: Ինչպե՞ս ուտես, որ ատամներդ չկոտրվեն: Թատրոնի ազդագրի փոխարեն ցուցանակին ատամնաբույժի աքցան էր նկարած:

Այդ թատրոնն առանց այն էլ լավ համբավ չուներ, ու քչերն էին այնտեղ գնում, իսկ հիմա, ցուցանակը տեսնելով, սկսեցին վախվորած շրջանցել:

Մի մարդ պետք է շտապ նամակ ուղարկեր, իսկ փոստի ցուցանակը՝ «Ցանկացած լուր՝ աշխարհի որ ծայրն ուզեք, ամենակարճ ժամկետում», գնացել-եկել, վարսավիրանոցի դռանն էր կախվել, ուր սովորաբար քաղաքի բամբասկոտ կանայք ժամերով համաքաղաքացիներին էին քննարկում: Այնպես որ, նամակը ոչ միայն հասցեատիրոջը հասավ, այլև բոլոր նրանց, ում ականջը խուլ չէր:

Վարսավիրանոցի ցուցանակը, որն ազդարարում էր «Քաղաքի լավագույն սանրվածքը», բախտի քմահաճույքով փակցվել էր ճաղատ դատավորի տան դռանը:

Դերձակի ցուցանակը երշիկեղենի խանութի վրա էր, հրշեջ կայանինը՝ դպրոցի, հիվանդանոցինը՝ ոստիկանության, գրադարանինը՝ բաղնիքի:


Իսկ ամենասարսափելին այն էր, որ փողոցների ցուցանակներն էլ էին խառնվել, ու տրանսպորտը չգիտեր ինչ ուղիով գնար. հետներ եղած ցուցանակների՞ն, թե՞ հույսը դներ հիշողության վրա:

Մի խոսքով, մինչև մարդիկ այդ օրը տուն հասան, հոգիները դուրս եկավ:





Փոստատարը պետք է մեր դպրոց ինչ-որ փաթեթ բերի, բայց
չգիտի դպրոցի ճանապարհը:
Ի՞նչ պետք է նա իմանա, որ կարողանա տեղ հասնել:



ՏԱՆԻ

Երևի մի քանի շաբաթներ անցում կունենա քաղաքի դպրոցների միջև կապի օգնությամբ: Նորից համայնքի մեջ կհաստատվի համապատասխան առարկաների և դասերի ղեկավարության համակարգ, որի նպատակն է արագորեն ձևավորել և զարգացնել համայնքի մեջ անհրաժեշտ քաղաքացիական և ազգային արժեքներ, հարմարեցնել դպրոցը իր անկախության և ղեկավարության համակարգին: Այս օգնությունը կընտանացնի մեզ և մեզ կօգնի զարգացնել մեր հայրենիքը:

Ուզո՞ւմ ես իմանալ, թե ձեր տանից որ կողմում է արևելքը. առավոտյան, երբ արթնանաս, կանգնի որ դեմքով դեպի արևը:

- Հենց դա էլ արևելքն է: ■ Հյուսիսը կլինի քո ձախ կողմում:
- Հարավը կլինի աջ կողմում: ■ Քո հետևում կլինի արևմուտքը:



1. Օգտվելով քարտեզից՝ պատասխանե՛ք հարցերին՝ օգտագործելով **աջ, ձախ, հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք, մոտ, կողքը, դիմացը, միջև բառերը:**

The map shows the following landmarks and their approximate locations relative to the center:

- Օդանավակայան** (Airport) at the top.
- Կարապի լիճ** (Lake) on the left.
- Կենդանաբանական այգի** (Zoo) at the top right.
- ԳՐԻՉՆԵՐԻ ՓՈՐՈՑ** (Bank) in the middle right.
- ԿԱՆՎԵՐՈՒՄ** (School) in the bottom right.
- ԿԱՆԱԿ ՓՈՐՈՑ** (Hospital) in the bottom right.
- Ագարակ** (Farm) at the bottom left.
- Եկեղեցի** (Church) at the bottom center.
- Զրուայգի** (Market) at the bottom right.

Numbered points on the map:

- 1: Zoo
- 2: School
- 3: Bank
- 4: Residential area
- 5: School
- 6: Residential area
- 7: Residential area
- 8: Residential area
- 9: Residential area
- 10: Residential area
- 11: Residential area
- 12: Hospital

- Ո՞րն է դպրոցի հասցեն:
- Ինչպե՞ս պետք է ԼԼոնը տանից դպրոց հասնի:
- Որտե՞ղ է գտնվում հյուրանոցը:
- Նկարագրե՞ք գրադարանի տեղը:
- Բացատրե՞ք, թե ինչպես կարելի է զբոսայգուց հասնել եկեղեցի:
- ԼԼոնն ու հայրիկը ուզում են կենդանաբանական այգի գնալ, կարո՞ղ եք բացատրել ճանապարհը:



- Ինչի՞ համար է մեզ պետք դպրոցը, հիվանդանոցը, ոստիկանությունը, զբոսայգին:
- Ձեր համայնքում է՞լ ինչ ծառայություններ կարող եք հիշել, առանց որոնց կո՞վարանար կենցաղը: Ինչպե՞ս:
- Ձեր թաղամասի տարբեր ծառայություններում աշխատող մարդիկ ե՞րբ կարող են զգալ միմյանց օգնության կարիքը:



2. 2-3 նախադասությամբ ավարտեք պատմությունները: Ի՞նչ պատահեց

1. Կար-չկար՝ մի քաղաք կար: Այդ քաղաքում հիվանդանոց չկար: Այնտեղ բոլորն առողջ էին: Բայց օրերից մի օր մեկը հիվանդացավ...
2. Անահիտը մի երագ տեսավ, իրենց քաղաքում դպրոցներ չկային: Սկզբում շատ ուրախացավ, բայց...
3. Կար-չկար մի երկիր կար: Այդ երկրի բնակիչները՝ մի օր որոշեցին, որ իրենց ոստիկաններ պետք չեն: Բայց մի օր...
4. Մեծ քաղաքի «խելոքները» որոշեցին քանդել բոլոր այգիներն ու տեղը բարձրահարկ շենքեր կառուցել, որ բոլորն էլ ավելի մեծ բնակարաններ ունենան: Բայց շուտով...
5. Մի քաղաքի աղբահավաքները հոգնեցին ուրիշների թափած աղբը հավաքելուց և որոշեցին ավելի հաճելի գործերով զբաղվել: Շուտով քաղաքում...





Ընտրիր որևէ մասնագիտություն և տրված օրինակով կազմի՛ր հանելուկ.

Աշխատելիս օգտագործում են **սանր ու մկրատ**
Օգնում են մարդկանց, որ **գեղեցիկ տեսք ունենան**

Ո՞վ են ես (Վարտավիրը)

Դաս 1

ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏԵՂԸ

Մեր թաղամասի մի մասը մեր փողոցն է:

Կարո՞ղ եք սանել, թե շեր փունըր ո՞ր փողոցում է գտնվում:



Մեր թաղամասը մեր քաղաքի կամ գյուղի մասն է:

Ո՞ր քաղաքում կամ գյուղում ենք ապրում:




Մեր քաղաքը կամ գյուղը մեր մարզի մասն է:

Ո՞րն է մեր մարզը:



Մեր մարզը մեր երկրի մասն է:

Ո՞րն է մեր երկիրը:



Կարո՞ղ եք քարտեզի վրա ցույց տալ ձեր բնակավայրը:



1

- Իմ տունը գտնվում է _____ փողոցում:
- Իմ փողոցը գտնվում է _____ թաղամասում:
- Իմ թաղամասը գտնվում է _____ գյուղում կամ քաղաքում:
- Իմ գյուղը կամ քաղաքը գտնվում է _____ մարզում:
- Իմ մարզը գտնվում է ի՞նչ երկրում:
- Իմ երկիրը _____ է :



2.

Ի՞նչ գիտեք ձեր բնակավայրի մասին.

Ուրե՞ք, գրե՞ք, նկարագրե՞ք:

Ձեր աշխատանքներով «Մեր բնակավայրը» պատտառ պատրաստեք:

Մեր սիրելի բնակավայրը

| 1-ին խումբ | 2-րդ խումբ |
|---|---|
| <p>Ինչո՞վ է գեղեցիկ մեր բնակավայրի բնությունը, ի՞նչ բույսեր, կենդանիներ կան:</p> | <p>Մեր բնակավայրում ապրող մարդիկ ի՞նչ զբաղմունքներ ունեն, որտե՞ղ են աշխատում:</p> |
| 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
| <p>Մեր բնակավայր եկած հյուրերին ինչո՞վ ենք հյուրասիրում, ի՞նչ հետաքրքիր բաներ, տեսարժան վայրեր ենք ցույց տալիս:</p> | <p>Մեր բնակավայրում մարդիկ տոներն ինչպե՞ս են նշում, ինչպե՞ս են ուրախանում:</p> |

ԱՄԵՆԻՅ ԼԱՎ ՏՈՒՆԸ



Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ,
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
Մի հին խրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ,
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Թող գնամ շրջեմ աշխարհից աշխարհի,
Ծամփորդեմ լավ-լավ տներ տեսնելու,
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,
Գամ քեզ էլ առնեմ, ու փախչենք հեռու
Էս գորշ խրճիթից,
Էս հին խրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Ու գնաց, երկար թափառեց տղան,
Մեծ ու հոյակապ շատ տներ տեսավ,
Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...

Ու հառաչելով հետ վերադարձավ
Էն գորշ խրճիթը,
Էն հին խրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

«Գտա՞ր, զավակս», - հարցրեց մայրը՝
 Ուրախ նայելով իր տղի վրա:
 «Ման եկա, մայրիկ, աշխարհից աշխարհ,
 Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
 Էս գորշ խրճիթն է,
 Էս հին խրճիթն է,
 Գետի եզերքին,
 Ծառերի տակին:



Այդ ի՞նչն էր, որ տղան չգտավ մեծ ու հոյակապ, շքեղ տներուն, բայց ուներ իր գորշ, իր հին խրճիթուն:



Մեծերից հարցուփո՞րձ արա, թե ինչպիսին էր քո բնակավայրն առաջ, ինչ նշանավոր մարդիկ են եղել: Փոքրիկ շարադրություն գրի՛ր այդ մասին:

Տնային առաջադրանք



Կարո՞ղ եք օրինակներ բերել, թե՞ մեր բնակավայրում ի՞նչ փոփոխություններ են կատարվել: Այդ փոփոխություններից որո՞նք են լավ, որո՞նք են վատ: Ինչո՞ւ:



1.

ՍԻՐՈՒՄ Է, ԹԵ՞ ՉԻ ՍԻՐՈՒՄ

Ձեր կարծիքով՝ նկարներում պատկերվածներից ո՞վ է հոգատար շրջապատի հանդեպ և սիրում է իր երկիրը, իսկ ով՝ ոչ: Բացատրե՛ք՝



1. Լևոնն ամեն գարուն բակում ծառեր է տնկում:



2. Լուսիկը պատշգամբում գեղեցիկ ծաղկանոց է սարքել:



3. Սարգիսն անտառի ծառերն անխնա կտրում է:




4. Արամը քաղաքավարի է, միշտ օգնում է հարևաններին:



5. Նունիկը երբեք աղբը գետին չի քափում:



6. Գոհարն իր հարեաններին չի ճանաչում և չի քարկում:



7. Հայկ պապիկը գեղեցիկ ու գրագետ հայերեն է խոսում:



8. Արամազդը աշխատասեր է ու բարեխիղճ:



9. Շողիկը ծույլ է ու փնթի:




10. Անուշ տատիկը ծնռանը միշտ ճրճողուկների համար հացի փշրանք է շաղ տալիս:



11. Վահանը ցուցանակները մեխում է ծառերին:



12. Սուրենը աղբը լուսամուտից դուրս է գցում:



13. Կարենը դիպուկ նշան է բռնում ու կոտրում փողոցի լապտերները:



14. Վաչիկը պատերին ու ծառերին իր անունն է փորագրում:



15. Արան նորոգել է իրենց բակի ճոճանակը:



16. Շահենը բնության գրկում հանգստանալիս իր թափածն այդպես էլ թողնում, հեռանում է:




17. Միքայելը պարսատիկով հալածում է ճնճղուկներին:



3.

Համեմատե՛ք նկարները և գտե՛ք տարբերությունները՝



- Ո՞ւմ օգնությամբ կարելի է մեր բնակավայրն ավելի լավ դարձնել:
- Ի՞նչը կարող ենք ինքներս անել:




Տեսի՛ն առաջադրանք

Մտածի՛ր, թե ինչ կարող ես անել քո բնակավայրի համար և առաջարկություններ արա:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ



- Ինչո՞վ ես դու նման կամ տարբեր ուրիշներից:
- Ինչո՞վ է ամեն մարդ անկրկնելի:
- Ինչո՞վ ես լսում, տեսնում, զգում:



- Ինչո՞վ են ընտանիքներն իրար նման:
- Ինչպե՞ս եք ընտանիքում հոգում իրար մասին:
- Ո՞ր տոնն ես ամենից շատ սիրում: Ինչո՞ւ:





- Ինչո՞ւ ենք դպրոց գնում:
- Բառերը կարո՞ղ են օգնել կամ խանգարել ընկերությանը:
- Ինչի՞ համար են կանոնները:



- Նկարագրեք դպրոց-տուն ճանապարհը:
- Ո՞րն է դպրոցի հասցեն:
- Ո՞րն է տան հասցեն:



- Ինչո՞վ են զբաղվում ձեր համայնքի տարբեր մարդիկ:



- Նկարագրեք՝ որտե՞ղ է գտնվում ձեր բնակավայրը:
- Ինչպե՞ս կարող ենք հոգ տանել մեր շրջապատի մասին:





1.

Թվարկե՛ք այն ամենն ինչ տեսնում եք ձեր շուրջը:

Տարբերակե՛ք բնության ստեղծած առարկաները մարդու ստեղծած առարկաներից և դու՛րս գրեք երկու սյունակով:



Բնությունը լինում է կենդանի և անկենդան

Կենդանի բնություն են.
բույսերը, կենդանիները,
մարդը:

Անկենդան բնություն են,
արևը, օդը, ջուրը, հողը,
քարերը, սարերը, քամին,
անձրևը, ձյունը...

Ծնվում են, սնվում են,
աճում են, բազմանում են,
մահանում են:

Ժամանակի ընթացքում կարող
են փոփոխվել ձևերը, չափերը:

2.

Տառերի բավիղում գտիր և մատիտով միացրու հետևյալ բառերը.
կարապ, ապառաժ, արջ, կաղնի, ավազ, արև, ջրարջ, կավ, կեռաս,
լուսին, ամպ, քար, որոր, ուրց, մուր, ջուր, սունկ, աղ, ջայլամ, սիգ:

| | | | | | | |
|---|----|----|----|---|---|---|
| խ | ա | ջ | զ | ռ | ա | ս |
| լ | յ | ր | ա | ե | կ | ա |
| ա | կ | ա | վ | ղ | ա | պ |
| մ | ու | ր | և | ն | ր | ա |
| պ | ու | ջ | ս | ի | գ | ռ |
| ց | ր | ու | ու | ն | ժ | ա |
| ք | ա | ր | լ | կ | ա | ղ |







3.

Նայե՛ք նկարներին և փորձե՛ք պատասխանել հարցերին:





- Ի՞նչ կարող եք ասել այս նկարների մասին:
- Ինչո՞ւ են նկարները բաժանված երկու խմբի:
- Ի՞նչ ընդհանրություններ եք տեսնում առաջին խմբի նկարներում: Իսկ երկրորդ խմբի նկարներո՞ւմ:
- Ի՞նչ տարբերություն կա երկու խմբերի նկարների միջև:



Տեսչին առաջադրանք

Վարժություն 2-ում գտած բառերը խմբավորի՛ր երկու սյունակով՝ կենդանի և անկենդան բնություն:



Գետակը

Սառն աղբյուրը
Բարձր սարի
Դրանց համար
Ինձ է տալի
Իր գով ջուրը
Կլկլալի :

- Ո՞ր ես վազում
Այդպես արագ,
Ա՛յ դու՛ կայտառ,
Սիրուն գետակ.
Կանգ առ, խաղանք
Ես ծառի տակ :

Իսկ կամուրջի
Տակն էլ որ կա,
Կա լվացքը
Պառավ կնկա,
Պետք է լվան
Քանի լույս կա :

«Չէ՛, փոքրիկս,
Գնամ պիտի.
Տես ջաղացը
Գյուղի մոտի.
Պետք է ուժ տամ,
Որ պտտի :

Դե՛, տեսնո՞ւմ ես.
Մնա՛ս բարով.
Ճամփաս ցանած
Հազար գործով,
Դադար չունեն
Ես մինչև ծով»:

Ցածն էլ հովտում
Անուշահոտ
Ինձ են մնում
Ծաղիկ ու խոտ,
Հոգնած-ծարավ
Տավարն ու հոտ:

Հ. Թումանյան



- Ո՞ր եր շտապում կայտառ գետակը:
- Ո՞ւմ պիտի օգներ և ինչո՞ւ:
- Իսկ ի՞նչ կլիներ, եթե չօգներ:



1.

Նայե՛ք նկարներին և կռահե՛ք, թե ինչի կարիք ունեն բույսերը:



Անին ծաղիկը դրել է լուսամուտի գոգին և չի մոռանում ջրել:



Հայկը ծաղիկը դրել է մութ անկյունում և չի մոռանում ջրել:




Արեգը ծաղիկը դրել է լուսամուտի գոգին, բայց մոռացել է ջրել:



1. Ի՞նչ պատահեց Հայկի ծաղկին:
2. Ի՞նչ պատահեց Արեգի ծաղկին:
3. Ինչի՞ մասին գիտեր Անին:

2.


Բույսերն ամրացած են հողին, բայց տես՝ նրանք էլ են շարժվում:



Արմատները շարժվում են դեպի ջուրը:





Տերևներն ու ծաղիկները շարժվում են դեպի լույսը:



Բույսի ցողունը ձգվում է դեպի վեր՝ արևը:

Անկենդան բնությունը նաև կենդանիների, բույսերի և մարդու բնակության միջավայրն է:



- Է՞լ ով ունի հողի, ջրի, արևի, օդի կարիք: Բացատրիր՝ ինչո՞ւ:
- Կարո՞ղ ես կենդանի և անկենդան բնության միջև կապերի այլ օրինակներ բերել:



3.

Միմյանց ձեռք բռնեք և կանգնեք շրջանով:

Պատկերացրեք, թե ձեզանից մի քանիսն անկենդան բնությունն են, մյուսները՝ կենդանի:

Ուշադիր լսեք և կատարեք ուսուցչի հրահանգները: Ի՞նչ կլինի, եթե արևը, օդը, ջուրը կամ հողը վերանան:

Փորձենք համոզվել.

- Պատկերացնենք, թե երաշտ է, և բույսերը չեն ջրվել. ի՞նչ կլինի:
- Բույսերը չորացել են, և բուսակերները կեր չունեն. ի՞նչ կլինի:
- Բուսակերները վերացել են, և գիշատիչները կեր չունեն. ի՞նչ կլինի:
- Երկրի վրա ոչ բույսեր կան, ոչ կենդանիներ. ի՞նչ կլինի:



Ասացվածք

Արևը բերքի հայրն է, ջուրը՝ մայրը:

Տնային առաջադրանք



Վերցրո՛ւ ափսե, վրան բարակ շերտով բամբակ փռիր: Առատ ջրի՛ր, այնպես, որ բամբակը ամբողջովին ջրով ներծծվի: Վրան շարի՛ր մի քանի ցորենի, լրբու և ոսպի հատիկներ և դիր որևէ տաք և լուսավոր տեղում: Չմոռանա՛ս պարբերաբար ջրել: Մի քանի օրից քեզ անակնկալ է սպասվում:



Տեսե՞լ եք, թե մեր չորս կողմը որքան բույսեր են աճում: Բույսերի մի մասը, օրինակ՝ ջրիմուռները, ո՛չ ծաղիկ ունեն, ո՛չ սերմ: Մյուսները ծաղկում են: Թե՛ վարդը, թե՛ տատասկը, թե՛ խնձորենին՝ բոլորը ծաղկող բույսեր են: Բոլորն ունեն արմատ, ցողուն, տերև, ծաղիկ, պտուղ և սերմ:

Բույսերն աշխատում են փոքրիկ գործարանների պես: Ամեն տերև, ասես մի փոքրիկ կանաչ մեքենա, արևից աշխատելու ուժ է ստանում և օդից ու ջրից սնունդ է պատրաստում բույսի համար:


Արմատներն էլ հողից են ջուր և սնունդ վերցնում բույսի համար:

**1. Օգտվելով բառերի պահոցից՝
լրացրու՝ նախադասությունները:**

օդ, արմատներ, արև, տերևներ, ջուր, ցողուն

- Բույսերը չեն կարող ապրել առանց և ջրի:
- Բույսերը հողին ամրանում են
- Առանց բույսերը կչորանան:
- Կանաչ տերևները աշխատելու ուժ են ստանում
- Բույսի համար սնունդ են պատրաստում
- Բույսի ձգվում է դեպի վեր:
- հողից ջուր ու սնունդ են վերցնում բույսի համար:





2.

Լուծե՛ք խաչբառը, ապա բառերի համարները գրե՛ք նկարում պատկերված բույսի համապատասխան մասերի դիմաց:

| | | | | | | | | | | | | |
|---|--|--|---|--|--|---|---|--|---|--|--|--|
| | | | | | | | | | 1 | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | 3 | 4 | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | 5 | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | 6 | | | |

1. Հաճախ շատ համեղ են, բայց գործոս սերմերը պահել-պահպանելն է:
2. Ջուրն արմատներից հասցնում են տերևներին, իսկ տերևներից սնունդ են հասցնում արմատներին:
3. Սիրուն են ու հոտավետ, բայց հիմնական գործոս սերմեր տալն է:
4. Խարսխի պես ամուր պահում են բույսը և հողից ջուր ու սնունդ են փոխանցում նրա բոլոր մասերին:
5. Ինձանից մի օր նոր բույս կծլի:
6. Ուժ ու եռանդ են ստանում արևից ու սնունդ են պատրաստում բույսի համար:

Գուշակիր՝ այն ինչն է, ինչը.

Մեկը ցողում է,
Մյուսը՝ խմում,
Երրորդը՝ սնվում:
Այն ի՞նչն՝ է:

(Սոփոստ 'Մնսպ 'Այսօրոյն)



Տնային առաջադրանք

Կուզենա՞ս սենյակային ծաղիկներ աճեցնել:
Հետևի՛ր խորհուրդներին:



Սենյակային
մանուշակ

1. Զգուշորեն մեկ տերև կտրիր և դիր ջրով լի ամանի մեջ: Որոշ ժամանակ հետո կտեսնես, որ տերևից արմատներ են առաջացել: Մի քիչ էլ սպասիր, երբ արմատներից նոր տերևներ առաջանան, տեղափոխիր հողի մեջ և դիր լուսամուտի գոգին, բայց ոչ արևի տակ: Հետևիր, որ հողը միշտ խոնավ լինի, բայց հիշիր, որ հաճախ ջրելն էլ կարող է վնասել:



Կակտուս

2. Զգուշորեն պոկիր «նուտիկը»: Ուշադիր նայիր և կտեսնես փոքրիկ ելուստներ: դրանք արմատներ են: Կարող ես անմիջապես հողը դնել և ջրել: Կակտուսը չորային վայրերի բույս է, և պետք չէ ջրել շաբաթը մեկ անգամից ավելի հաճախ:



Բաղեղ

3. Զգուշորեն մի ճյուղ կտրիր և դիր ջրի մեջ: Որոշ ժամանակ հետո, երբ ցողունից արմատներ առաջանան, տեղափոխիր հողի մեջ և դիր որևէ լուսավոր տեղ, բայց ոչ արևի տակ: Պարբերաբար ջրիր, որ հողը չչորանա:



Բույսերը բազմազան են՝ խոտաբույսեր, թփեր, ծառեր: Բույսերից ամենամեծը ծառերն են: Ծառերի մեջ առանձնանում են փշատերև և սաղարթավոր տեսակները: Փշատերև ծառերի տերևներն ասեղի են նման կամ թեփուկավոր են, իսկ սերմերը կոների մեջ են լինում: Այս ծառերը մաև մշտադալար ենք անվանում, որովհետև նրանք տարվա ընթացքում



աստիճանաբար են փոխում իրենց փշե տերևները և ողջ տարին կանաչ են:

Սաղարթավոր ծառերի տերևները հարթ են և փռված:


Դրանք սովորաբար աշնանը թափվում են, իսկ գարնանն աճում են նորերը:





Նայի՛ր նկարին.

պատկերված բույսերն առանձնացրու երեք սյունակով՝
խոտաբույսեր, թփեր, ծառեր:



- խոտաբույսերի ցողունը հյուսթալի է և փափուկ:
- Ծառերինը՝ հաստ, ամուր, փայտյա մեկ ցողուն է, որը կոչվում է բուն:
- Թփերի արմատից վեր են բարձրանում բազմաթիվ բարակ, ճկուն և ոչ շատ բարձր, նույնպես փայտյա, ցողուններ:

2. Բառադարանից օգտվելով՝ գտի՛ր ծառերի թաքնված անունները:

Եղևնու գծապատկերում կգտնես փշատերև, իսկ սոսիի գծապատկերում՝ սաղարթավոր ծառերի անունները:

ԲԱՌԱԴԱՐԱՆ

| | |
|--|--|
|  <p>կաղնի</p> |  <p>եղևնի</p> |
|  <p>մալրի</p> |  <p>ուռեցի</p> |
|  <p>հացեցի</p> |  <p>նոճի</p> |






սոճի



սոսի



բարդի



կտեբյճ
գմնղպով
իղեւմայրի
հսեցնոճիօ
իսոճիօղի




ակաղնիվ
ժֆղունկտ
ցգղռբֆետ
յբբֆելիյֆ
սմռտվնմյֆո
տկսոսիլտմն
ահացենիվտմ
շումբարդի

Անձեռագիր պատմություն

Ծառի բնի կտրվածքը դիտելիս օղակներ կտեսնես: Դրանցով կարելի է որոշել ծառի տարիքը: Ամեն տարի օղակների թիվը մեկով ավելանում է, այսինքն՝ ծառն այնքան տարեկան է, որքան օղակ կա կտրվածքի վրա: Եթե տարին չորային է եղել, օղակը նեղ է, իսկ եթե տարին խոնավ է եղել, ապա օղակը լայն է:

3. Ուշադիր զննիր նկարը և ասա.

- Ծառը քանի՞ տարեկան է:
- Նրա կյանքի ո՞ր տարին է չորային եղել, որը՝ խոնավ:



Գիտե՞ս, որ.



- Ամենաբարձր ծառը **սեկվոյան** է: Այն աճում է Ամերիկայում: Կարող է հասնել մոտ 100մ բարձրության և ապրել մինչև 5000 տարի:

- Ամենահաստաբուն ծառը **բադրարն** է: Այն աճում է Աֆրիկայում:



- Ամենաարագ աճող խոտաբույսը **բամբուկն** է:



Տեսի՛ն առաջադրանք

Երբ գնաս զբոսանքի, ուշադրություն դարձրու, թե քո շրջակայքում ինչպիսի՞ բույսեր են աճում: Որո՞նք են քեզ ծանոթ:

Տերևների նմուշներ հավաքիր, փակցրու տետրում և գրիր դրանց անունները:

ԲՈՒՅՄԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԸ

ՄԵՐ ԿԱՆԱԶ ԸՆԿԵՐՆԵՐԸ



Ո՞ւմ հաճելի չէ, երբ բակերն ու փողոցները լի են բուսականությամբ: Ո՞վ չի հիանում բնության չքնաղ պատկերներով: Ել ի՞նչ հանդիսություն, որ ծաղիկներով զարդարված չլինի: Բնությունը ոգեշնչել է շատ բանաստեղծների ու նկարիչների: Գեղեցիկ ծաղիկների անուններով մարդկանց են անվանում...

1. Երեխաներից ո՞ւմ անունը ո՞ր ծաղկի հետ կապ ունի:



Վարդգես Յուշան Շամիկ Մեխակ Մանուշակ Նարգիզ Նունուֆար



Բույսերը գեղեցիկ են դարձնում մեր առօրյան, բայց ոչ միայն: Դրանք մեզ սնունդ են տալիս՝ **միրգ, բանջարեղեն, հաց, թեյ**, ուրիշ շատ բաներ...

Ծառերից **թուղթ** ենք ստանում, **կահույք** պատրաստում, **տներ** կառուցում: Բամբակն ու վուլշը դառնում են **թել**, հետո **գործվածք**, հետո էլ՝ **հագուստ**: Ծաղիկներից ստացված հուտավետ նյութերով **օճանելիք** են պատրաստում:



2.

Նայե՛ք նկարին և թվարկե՛ք այն ամենն, ինչ բույսերից ենք ստանում:



Անտառները հաճախ «Երկրագնդի թոքեր» են անվանում, քանի որ բույսերն են օդը հագեցնում շնչելու համար մեզ անհրաժեշտ **թթվածնով**:

Բույսերը նաև բազմաթիվ օգտակար և բուժիչ հատկություններ ունեն:

Առանց բույսերի կյանքն անհնարին կլիներ Երկրի վրա:

- Իսկ գիտե՞ս, որ առաջ **դեղ** բառը **բույս** է նշանակել: Կարո՞ղ ես ասել ինչո՞ւ:
- Ի՞նչ բույսեր կարող ես թվարկել, որ բուժիչ հատկություն ունեն:



Տեսի՛ն տալադրանք

Մեծերին հարցուփորձ արա և փորձի՛ր ստեղծել քո փոքրիկ կանաչ դեղատունը՝ տեսրու՛մ գրի՛ր մի քանի դեղաբույսի անուն և նրանց բուժիչ հատկությունները:



Բնության մեջ անենուրեք՝ անտառներում, հովիտներում, սարալանջերին, գետի եզերքին, ճահիճներում և այլուր բազմատեսակ բույսեր են աճում: Դրանք ոչ ոք չի տնկել և ոչ ոք չի խնամում. դրանք վայրի բույսերն են: Բույսերի մի մասն էլ մարդն է աճեցնում՝ բանջարանոցներում, դաշտերում, այգիներում: Այդ բույսերը անվանում ենք մշակովի բույսեր: Թե՛ վայրի, թե՛ մշակովի բույսերի մեջ կան և՛ ծառեր, և՛ փիեր, և՛ խոտաբույսեր: Մշակովի բույսեր են բանջարեղենը, մրգերը, հացահատիկը, ինչպես նաև շատ ծաղիկներ:

1. Նայի՛ր նկարներին.

- Պատկերված բույսերից որո՞նք են ճանաչում: Կարո՞ղ ես անվանել: Որո՞նք են աճում քո շրջապատում:
- Փորձիր տարբերել՝ դրանցից որո՞նք են վայրի, որոնք՝ մշակովի:
- Պատկերված մշակովի բույսերից ո՞րն ինչ նպատակով են աճեցնում:





2. Համեղ և օգտակար

Բոլոր մրգերը, բանջարեղենը, հացաբույսերը, ընկույզները, կանաչեղենը, որոնք մենք հաճույքով ուտում ենք, մեզ տալիս են բույսերը: Լևոնն իր հողամասում բույսեր է աճեցրել:

Փորձե՛ք դրանք խմբավորել ըստ իրենց ուտելի մասերի:

ցողուն, տերև, ծաղիկ, արմատ, պտուղ, սերմ:

Օրինակ՝ տերև - սպանախ, համեմ...

պտուղ - վարունգ...

և այլն:



Գիտե՞ք, որ

Ամերիկայի հնդկացիները արևածաղկի բոլոր մասերն օգտագործում էին: Արմատն ուտում էին, ցողունն ու տերևները տալիս էին կենդանիներին, սերմերից այլուր էին աղում, դեղին ծաղիկներից ներկ էին ստանում, իսկ սերմերից ստացած յուղով մագերն էին օծում:



Կենդանի բնության մաս են նաև սնկերը:
 Դրանք իրենց հատկություններով տարբերվում են
 բույսերից: Այդ մասին դուք կսովորեք ավելի բարձր
 դասարաններում: Սնկերն աճում են անտառներում,
 մարգագետիններում, ավելի հաճախ՝ անձրևից հետո:
 Ուտելի սնկերը համեղ են և օգտակար:

Ուտելի սնկերից են



շամպինյոնը,



կախասունկը

ՈՒՇԱԴՊՈՒԹՅՈՒՆ. չի կարելի քաղել և ուտել անձանոթ որևէ
 բույս կամ սունկ, թեկուզ և այն ախորժեղի տեսք ունենա: Կան
 բույսեր և սնկեր, որ թունավոր են: Անձանոթ հատապտուղ կամ
 սունկ ուտելը կարող է նույնիսկ մահացու լինել:

Թունավոր սնկերն են



ձանձասպանը



դժգույն պղզանկան



3.

Գտեք, թե, ո՞ր հանելուկը ո՞ր նկարին է վերաբերում

Այն ի՞նչն է, ինչը

- 1 Ծեկլիկ աղվեսը
խոր բնում նստել՝
Կանաչ պոչիկը
Դրսում է թողել:
- 2 Մեջն ուտելիք,
Դուրսը վառելիք:
- 3 Գլուխ չունի՝ գլխարկ ունի,
Կոշիկ չունի՝ տոտիկ ունի:
- 4 Կանաչ սուրքիթ կտրիճին
Կծեցի ու այրվեցի:
- 5 Մարգում ապրող
Մի խիստ տիկին
Տասը շապիկ
Ունի հագին:
Թե շապիկները հանես՝
Դառն արտասուք կթափես:
- 6 Փեշը՝ փեշին,
Փեշը՝ փեշին,
Հագավ, նստեց
Մարգի միջին:





**Փորձիր ինքդ էլ բույս մշակել՝ տնկել, ջրել,
խնամել, աճեցնել և բերք ստանալ:**

Դրա համար քեզ պետք կգան.

- մեկանգամյա օգտագործման բաժակներ
- բողկի սերմեր
- հող

1. Բաժակների կեսից ավելին հող լցրու:
2. Սերմերը տնկիր հողի մեջ և կանոնավոր ջրիր:
Բողկը շատ արագ է աճում, և 20-30 օրից արդեն բերք կստանաս:
3. Երբ «բերքահավաքի» ժամանակը գա՝ հողից բողկերը հանիր, լվա, ապա փաթեթի մեջ դիր, որ տանես դպրոց և հյուրասիրես ընկերներիդ:

ԿԵՆՂԱՆԻՆԵՐ


Կենդանական աշխարհին էլ բույսերի պես բազմազան է: Կենդանիները տարբերվում են իրենց չափերով, ձևով, հատկություններով, սովորություններով, բնակության վայրով և այլն, բայց բոլորն էլ ապրելու համար օդի, ջրի և արևի կարիք ունեն:



Ի՞նչ կենդանիներ կարող ես թվարկել, ի՞նչ գիտես դրանց մասին:




1. Բավիղում փնտրե՛ք և գտե՛ք, թե կենդանիների ո՞ր խումբն ինչ հատկություններով է մյուսներից տարբերվում:





2.

Նայե՛ք նկարին և փորձե՛ք կենդանիներին խմբավորել ըստ արդեն ձեզ հայտնի խմբերի:



3.

Նկարից ընտրի՛ր որևէ կենդանի և նկարագրի՛ր նրան՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ի՞նչ է քո ընտրած կենդանու անունը:
- Կենդանիների ո՞ր խմբին է պատկանում :
- Մարմնի ի՞նչ մասեր ունի ընտրածդ կենդանին:
- Ի՞նչ հետաքրքիր հատկանիշ ունի:
- Որտե՞ղ է ապրում:
- Ինչպե՞ս է տեղաշարժվում:
- Եթե այդ կենդանու մասին էլի ինչ-որ բան գիտես՝ լրացրու պատմությունդ:



Տնային առաջադրանք

Նայի՛ր նկարներին: Կարո՞ղ ես ասել, թե պատկերված մասերից որը կենդանիների ո՞ր խմբին է բնորոշ: Խմբավորիր մասերը՝ համարները գրելով կենդանիների համապատասխան խմբերի դիմաց:



Միջատներ

Չկներ

Երկկենցաղներ

Սողուններ

Թռչուններ

Կաթնասուններ



Գիտե՞ք, որ աշխարհում անթիվ-անհամար միջատներ կան: Իսկ դուք քանիսի՞ն կարող եք թվարկել:

Միջատներն ամենուր են.

■ թռչում են, ինչպես ճանճերն ու մեղուները,



■ քայլում են շարասյուններով, ինչպես մրջյունները,



■ ճախրում են, ինչպես քիթռները,



■ ցատկոտում են, ինչպես մորեխը և ծղրիղը,

■ լողում են, ինչպես լողաբզեզը:



■ քայլում են ջրի վրայով, ինչպես ջրաչափիկը,



Այս զարմանալի կենդանիները շատ տարբեր են մյուսներից: Նրանք երկուսի փոխարեն կարող են ունենալ չորս, հինգ, մինչև իսկ տասը աչք: Մենք լսում ենք ականջներով, իսկ նրանց լսողության զգայարանը ուր ասես կարող է լինել: Ծղրիղինն, օրինակ, ոտքերի վրա է, իսկ քիթռինը՝ փորիկի երկու կողմում: Միջատների մեծ մասը սնվում են բույսերով և շատակեր են: Եթե չլինեին նրանցով սնվող թռչուններն ու որոշ միջատներ, նրանք մեծ վնաս կհասցնեին բույսերին: Մեկ մրջնանոցի մրջյունները մեկ



օրում ուտում են այնքան վնասատու միջատ, որքան փայտփորիկը քսան օրում:

Ճպուռը երկու ժամում կարող է քառասուն ճանճ ուտել: Բայց միջատները մի շատ կարևոր օգտակար գործ են անում. շատ բույսեր չեն կարող պտուղ տալ, եթե միջատները նրանց ծաղկափոշին ծաղկից ծաղիկ չտեղափոխեն:



- Ինչպե՞ս կտարբերես միջատներին մյուս կենդանիներից:
- Ի՞նչ օգտակար միջատներ գիտես: Ի՞նչ օգուտ են տալիս:



1 **Գտե՛ք յուրաքանչյուր նախադասության կեսը և կիմանաք, թե ուր են կորչում միջատները ձմռանը:**

1 Ճանճերը, մոծակները ձմեռելու տաք տեղ են գտնում նկուղներում,...

2 Բզեզներն ու մրջյունները...

3 Մորեխներն ու ծղրիղները աշնանը ձվադրում...

4 Թիթեռներ կան, որ թռչունների...

...անձավներում, ծառերի կեղևի մեջ և այլուր:

...են ու սատկում:

...թաքնվում են հողի տակ:

...պես չվում են:





Սարդերն ու կարիճները միջատներ չեն:

- Նայե՛ք նկարներին և փորձե՛ք գտնել, թե ինչով են նրանք տարբերվում միջատներից:



2.


Հարցերին պատասխանելով՝ գտե՛ք պատկերված կենդանիների անունները և լրացրե՛ք խաչքառը:



մրջյուն



մեղու



ծղրիղ



գատիկ



ճպուռ




խավարասեր



թիթեռ

սարդ



լուսատտիկ,

1. Ունենմ թափանցիկ թևեր ու խոշոր մարմին, ցատկոտում են տեղից տեղ, ամռան գիշերներով երգելու համար երեխաներն ինձ ճռիկ են ասում:
2. Ես փոքրիկ կլորիկ կարմիր մարմին ունենմ՝ սև պուտերով: Երեխաներն ինձ շատ են սիրում : Իսկ գիտե՞ք, որ օրը երկու հարյուրից ավելի վնասատու միջատ են ուտում:
3. Ես պստիկ եմ, բայց ճատիկ եմ: Մեղվի պես աշխատասեր եմ ու ապրում եմ մեծ ընտանիքով՝ գետնի տակ մեր շինած քաղաքում
4. Ունենմ երկու զույգ երկար ու նուրբ թևեր, ապրում եմ ջրին մոտ, ուտում եմ փոքր միջատներ, նման եմ ուղղաթիռի :
5. Ես սիրում եմ խոնավ ու մութ տեղեր, դուրս եմ գալիս գիշերով, տանտերերը չեն սիրում ինձ:
6. Ես հմուտ ջուլհակ եմ, ոստայն եմ գործում ու դրանով ճանճ որսում: Շատերը սխալմամբ կարծում են, թե ես միջատ եմ:
7. Ես փոքրիկ բզեզ եմ, գիշերները փորիկովս լույս եմ տալիս:
8. Երբ ձվից նոր էի դուրս եկել, թրթուր էի: Հետո փաթաթվեցի բոժոժի մեջ ու այնքան սպասեցի, մինչև դարձա ծաղկի նման գեղեցիկ ու վառվռուն:
9. Ապրում եմ փեթակում մի մեծ ընտանիքով, ժրաջան եմ՝ ծաղկից ծաղիկ եմ թռչում ու նեկտար հավաքում:

| | | | | | | | | | | | | | | |
|---|--|--|---|--|---|--|---|--|---|---|--|---|--|---|
| | | | | | | | | | | 1 | | | | |
| | | | | | | | | | 2 | | | | | 3 |
| | | | 4 | | | | 5 | | | | | | | |
| | | | | | 6 | | | | | | | | | |
| | | | 7 | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | 9 | | |
| | | | | | | | | | | | | | | |





**Խաչբառից ընտրիր որևէ մեկ միջատ և նկարիր այն:
Լրացուցիչ տեղեկություններ հավաքիր և լրացրու նրա
մասին թերթիկը.**

Անունը

Որտեղ է ապրում

Ինչով է սնվում.....

Ինչպես է ծնեռում.....

Ինչ օգուտ կամ վնաս է տալիս.....

.....





Թռչունները երկնքի տիրակալներն են և կարող են անպե-
րից էլ վեր թռչել, թեև չթռչող թռչուններ էլ կան, օրինակ՝ պինգ-
վինը և ջայլամը: Բայց բոլոր թռչունները պատված են
փետուրներով: Փետուրները նրանց պաշտպանում են ցրտից,
չոգից և վնասվածքներից:



1. Թռչունները մեկ կամ մի քանի ձու են ածում
և թուխս նստում:



2. Ճուտիկները լույս աշխարհ են գալիս
ծվի կեղևը ներսից ջարդելով:



3. Թռչունները հոգ են տանում իրենց ծագերի
մասին՝ սնունդ են բերում նրանց համար,
իսկ երբ ծագերը մի փոքր մեծանում են՝
թռչել են սովորեցնում:




ԱՐԱՋԱՆԳ. ձեռք մի տվեք բնուն եղած ձվերին:

Մայր թռչունն իր ձվերը հոտով է ճանաչում:
Եթե դրանց հոտը փոխվի, նա այլևս թուխս չի նստի
դրանց վրա:

Որոշ թռչուններ աշնանը չվում են տաք երկրներ՝ ծնեռելու:
Մյուսները դիմանում են ցրտին, բայց նրանց համար
դժվարանում է կեր գտնելը: Դրա համար էլ հնուց մարդիկ,
բերքը հավաքելիս, մի փոքրիկ բաժին էլ թողնում էին մեր
թևավոր բարեկամներին:

- Իսկ մե՞նք ինչ կարող ենք անել նրանց օգնելու համար:





Ուշադիր նայե՛ք նկարի թռչուններին:

Նրանք ատամներ չունեն, բայց փոխարենն ամուր կտուց ունեն: Կարո՞ղ եք կտուցի ձևից կռահել, թե որն ինչ է սիրում ուտել:



Շավաղուն



Թուրակ



Ծիծեռնակ



Փայտփորիկ



Կոկիբրի



Արծիվ

- 1 Ես կտուցով ծակում եմ ծառի բունը և միջից միջատներ եմ հանում, որ ուտեմ:
- 2 Ամուր կտուցովս կտտրում, ճեղքում եմ ընկույզներն ու սերմերը և ուտում միջուկը:
- 3 Իմ հզոր և սուր կտուցով հոշոտում եմ որսած կենդանիներին:
- 4 Կտուցովս մեծ կուներով ջուր եմ վերցնում՝ ձկների հետ միասին:
- 5 Իմ երկար բարակ կտուցով ծաղիկներից նեկտար եմ խմում:
- 6 Կտուցս բարակ է ու նուրբ, հարմար է, որ օդից միջատներ որսամ:




Գիտե՞ք, որ

- Ճնճղուկների մի զույգը որդերից փրկում է 20-30 կողով խնձոր:
- Ծիծեռնակների մեկ ընտանիքն ամռան ընթացքում ոչնչացնում է միլիոնից ավելի վնասատու միջատ:
- Սարյակների սիրած ուտելիքը մորեխներն ու բզեզներն են:
- Փայտփորիկը վերացնում է ծառի կեղևի տակ բույն դրած միջատներին:



2

Իսկ հիմա նայե՛ք նկարին և պատմե՛ք, թե է՛լ ինչ իմացաք թռչունների մասին: Նրանցից ո՞վ որտեղ է բույն դնում:





Պատկերացրու, թե գործիքները կտուցներ են: Փորձեր արա ու տես, թե դրանցից որը որ «կերակրատեսակը» վերցնելուն է հարմար:

թութակի կեր



արևածաղկի սերմեր



հացի կողիկ



կաղին կամ ընկույզ




ծանծաղ ամանով ջուր



բաժակով ջուր



աքցան



փոքր ունեղի



կաթոց



աղցանի բռնիչ



խոհանոցի ցանցաքամիչ



պարանի կարճ կտորներ




1. Ծանծաղ ամանի մեջ ռետինի մի քանի կտոր գցիր՝ իբր ձկնիկներ են:
2. Բաժակի մեջ ջուր լցրու. պատկերացրու, թե ծաղկի նեկտարն է:
3. Սեղանին թութակի կեր շաղ տուր:
4. Պարանի կտորտանքը նետիր հատակին, իբր որդեր են:
5. Հացի կողի մեջ արևածաղկի սերմեր խրիր, իբր միջատներ են, որ ապրում են ծառի կեղևի մեջ:
6. Սեղանին կաղին ու ընկույզ դիր:



Կարո՞ղ ես ասել, թե որ գործիքն ինչ թռչունի կտուցի է նման:



ՁԿՆԵՐ




Եթե թռչունները երկնքի տիրակալներն են, ապա ձկները՝ ջրերինն են: Նրանք բնակվում են տարբեր խորություններում և շատ բազմազան են՝ մեծ ու փոքր, բուսակեր և գիշատիչ:

Ձկների մարմինը պատված է թեփուկներով: Նրանք իրենց երկարաձիգ ու սահուն մարմնի շնորհիվ հեշտությամբ ճեղքում են ջուրը:




Նշանների փոխարեն համապատասխան տառերը տեղադրելով՝ լրացրե՛ք նախադասությունները, և նոր բաներ կսովորեք ձկների մասին:



Ամենակատաղի և          ծուկը
շնածուկն է:








ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ




Գորտ ու դողոշ բոլորս ենք տեսել: Շերեփուկները՝ նրանց ձագերը, ծնվում են ջրում, իսկ մեծանալով՝ դուրս են գալիս ցամաք: Դրա համար էլ կոչվում են երկկենցաղներ: Սնվում են խխունջներով և վնասատու միջատներով, իսկ մարդու համար անվնաս են:



2. Նշանների փոխարեն համապատասխան տառերը տեղադրելով՝ լրացրե՛ք նախադասությունը, և նոր բաներ կսովորեք երկկենցաղների մասին:

Գորտի մաշկը կանաչ է,    
ու խոնավ, իսկ դողոշի մաշկը գորշ է,
   ու բշտիկներով պատված:




ՍՈՂՈՒՆՆԵՐ




Սողունների մի մեծ խումբ են օձերը: Բնության մեջ նրանց հանդիպելիս զգույշ եղեք՝ նրանք կարող են շատ թունավոր լինել: Սողուններ են նաև կոկորդիլոսները, կրիաներն ու մողեսները: Սողունների ձագերը նույնպես ձվից են դուրս գալիս:



3. Նշանների փոխարեն համապատասխան տառերը տեղադրելով՝ լրացրե՛ք նախադասությունները, և նոր բաներ կսովորեք սողունների մասին:




Օձերը գարնանը փոխում են իրենց       :



Վտանգի դեպքում
կրիան քարքվում է
իր
պատյանի մեջ:

Եթե փորձես մողեսին բռնել,
 կբողնի ձեռքումդ
ու կփախչի:



Տնային առաջադրանք

Կարդ՛ա գաղտնագիրը.

1. Սողուններն իրենց ձվերը
դնում են ցամաքում և ծածկում

:

2. Կոկորդիլոսը ձվից դուրս եկած
ծագերին տեղափոխում է

:



ԿԱՅՆԱՍՈՒՆԵՐ

Կենդանիների մի մեծ խումբ կոչվում են կաթնասուններ, քանի որ իրենց ձագուկներին կաթով են կերակրում: Նրանք սովորաբար չեն լքում իրենց ձագերին՝ խնամում են և շրջապատում հոգատարությամբ: Կաթնասունները բազմազան են իրենց չափերով, սննդի ընտրությամբ, բնակության վայրով և այլն:

- Առյուծը սնվում է այլ կենդանիներով:



- Եղնիկը սնվում է բույսերով: Նա բուսակեր է:



- Կուղբը փոքրիկ ջրային կենդանիներ է ուտում:



- Արջն ամենակեր է՝ սնվում է թե՛ մրգերով, թե՛ կենդանիներով, թե՛ մեղր է սիրում:



Ի՞նչ են կարծում՝ ինչո՞վ է սնվում մրջյնակերը:



**Կաթնասունները տեղաշարժվելու տարբեր միջոցներ ունեն՝
թաթեր, ոտքեր, լողակներ, թևեր:**



● Մագլցում են, ինչպես կապիկները:

● Թռչում են, ինչպես չղջիկը:



● Վազում են, ինչպես վագրակատուն, որն ամենաարագավազ ցամաքային կենդանին է:

● Քայլում են երկու ոտքի վրա, ինչպես մարդը:



● Նրանք ցատկում են, ինչպես կենգուրուն: Նա իր ծագերին պահում է փորի վրա գտնվող պարկի մեջ:



● Լողում են, ինչպես դելֆինները և կետերը: Աշխարհի ամենախոշոր կենդանին կապույտ կետն է:





1.

Կարող եք ասել, թե նկարում պատկերված կաթնասուններից որն ինչպես է ձմեռում:



արջ



փոքրուկ



չղջիկ



մուկ




կուղբ





սկյուռ

աղվես



նապաստակ



- ա) Ձմռան համար ուտելիք են պաշարում՝ ընկույզ, կոներ, սունկ, ցորեն, կաղին, արմտիք՝ նայած, թե ով ինչ է սիրում:
- բ) Ձմռանը նրանց մորթին խտանում է, որ պաշտպանի խստաշունչ ցրտերից և փոխում է գույնը, որպեսզի աննկատ մնան ձմեռային բնության մեջ:
- գ) Ձմռանը քուն են մտնում իրենց բներում և ապրում են իրենց մաշկի տակ կուտակած ճարպի հաշվին:



2.

Տառերի բավիղում գտե՛ք պատկերված կենդանիների անունները և գրե՛ք, թե ով ինչպես է պաշտպանվում:

- արագ վազելով
- ուժով
- արտաքին ծածկույթով



ա լ մ վ ա յ ռ ե ն ա կ ե ռ պ ս ղ մ
 բ ս յ ա ք պ ո ն ա դ ֆ ե տ լ օ պ խ
 ո բ ֆ գ բ յ հ ֆ պ պ գ ք ա գ հ բ ս
 գ ե բ ռ օ ս մ ղ ա լ վ կ ի ն մ լ ջ
 ն ա դ ք ի փ թ ա ս ա օ ք ռ ձ գ ա պ
 ի փ ի ղ փ ց գ ե տ ա ձ ի ն ռ ձ ղ ֆ
 ու գ ա կ ս ֆ տ բ ա յ ծ յ ա մ թ ս յ
 թ տ ռ մ հ ա կ ի կ խ ե թ ու ն բ ք փ
 մ օ ջ լ ե դ ռ ն գ յ ե ղ ջ յ ու ռ լ

Տնային առաջադրանք

Նկարի՞ր որևէ կաթնասուն և նկարի չորսբոլորը գրի՞ր այն ամեն ինչ գիտես նրա մասին: Փորձի՞ր այդ կենդանու մասին լրացուցիչ տեղեկություններ գտնել:



Բնության մեջ կենդանիներն իրենք են իրենց մասին հոգ տանում՝ սնունդ հայթայթում, բներ պատրաստում, պաշտպանվում թշնամիներից և բնության երևույթներից: Այդ կենդանիները կոչվում են վայրի կենդանիներ: Բայց կան նաև կենդանիներ, որոնց մասին մարդիկ են հոգ տանում՝ կերակրում են, պաշտպանում, խնամում ձագերին:

1. Նայի՛ր նկարին և տարբերակի՛ր ընտանի և վայրի կենդանիները:




- Ինչի՞ համար է մարդը կենդանիներին ընտելացրել: Թվարկեք, թե նկարի ընտանի կենդանիներից որն ինչ օգուտ է տալիս մարդուն:
- Էլ ի՞նչ ընտանի կենդանիներ գիտեք:






2.

Թվարկե՛ք, թե նկարում պատկերված ընտանի կենդանիներից որն ինչ է տալիս մարդուն:






Շները մեր
պահապաններն են:



Շները պաշտպանում են մեր
երկրի սահմանները:



Շները կույրերի
«աչքերն» են:



Շները փրկում են
մարդկանց:



Ուրիշ ի՞նչ օրինակներ կամ պատմություններ գիտեք շների
և մարդու բարեկամության մասին:

Նայե՛ք նկարներին և մտածե՛ք՝ ի՞նչ են զգում
կենդանիները և ի՞նչ կասեին, եթե խոսել կարողանային:



Ծնճղուկ են, և
փողոցում
տղաները
պարսատիկով
խաղում են:




Փիսիկ են, և
դիմացս
թթվատերով
աման են դրել:



Թռչուն են, և
մարդիկ ինձ
համար կեր են
շաղ տվել:



Աղվես են և
որսորդների
շեփորի ձայնն
են լսում :



Թիթեռ են, և
ուր որ է ինձ
կրճեն:



Շնիկ են, և
տերս ինձ
շատ է
սիրում:



Իշուկ են, և
մեջքիս շա՛տ
ծանր բեռ են
բարձել:




Առյուծ են,
և ինձ
վանդակում
են պահում:

- Ինչո՞ւ են կենդանիները մարդկանց նման և ինչո՞ւ են տարբեր:
- Ի՞նչ կարող ենք մե՛նք անել կենդանիների համար:




1.

Նայե՛ք նկարներին և ասե՛ք.



- Ի՞նչ փոփոխություններ եք տեսնում:
- Ի՞նչն է այդ փոփոխությունների պատճառը:








2.


Բնությունը վտանգված է

Նայե՛ք նկարներին և ասե՛ք.

- Համեմատե՛ք նկարների զույգերը: Ինչո՞վ են տարբերվում:
- Ի՞նչն է փոփոխությունների պատճառը:







Վտանգված կենդանիներ և բույսեր

Մի ժամանակ բուսական ու կենդանական աշխարհն ավելի հարուստ էր: Բայց այսօր ինչ-որ տեսակներ այլևս չկան: Մենք չենք տեսնի, օրինակ՝ թրատամ վագր, կամ դողո թռչուն՝ դրանք վերացել են: Իսկ մարդիկ շարունակում են փիղ որսալ, որ ժանիքներից գարդեր պատրաստեն, կամ ընծառյուծներին ոչնչացնել՝ նրանց գեղեցիկ մորթուց մուշտակներ կարելու համար: Անտառներն անխնա կտրվում են, որ թուղթ պատրաստեն: Այս է պատճառը, որ կենդանիների ու բույսերի շատ տեսակներ այսօր ավելի ու ավելի հազվադեպ են հանդիպում:



3.

Ահա «Բնության բարեկամների կանոնների» մի քանի օրինակ: Կարծում ենք՝ դու՛ք էլ կսկսեք հետևել դրանց:

1



Չքաղենք ծաղիկները, թող դրանք գարդարեն բնությունը:

2



Չկտրենք ծառերի և թփերի ճյուղերը:



3



Չվնասե՛նք
թիթեռների՛ն և
բզեզների՛ն:

4



Չվնասե՛նք
թռչունների՛ն:

5



Անխնա
չվատնե՛նք
թուղթը:

6



- Կարո՞ղ եք մի քանի կանոն էլ դուք առաջարկել:
Մտածեք և դրանց համապատասխան արգելող նշաններ
նկարեք:



Ի՞նչ ենք ուտում

Առողջ լինելու համար մեր մարմնին տարբեր նյութեր են հարկավոր, որ մենք ստանում ենք տարբեր տեսակի ուտելիքներից: Օրինակ՝ կաթնեղենն ամրացնում է մեր ոսկորները մսեղենն ու ձկնեղենն օգնում են, որ արագ մեծանանք, հացեղենը մեզ ուժ ու եռանդ է տալիս, իսկ վիտամիններով հարուստ մրգերն ու բանջարեղենը հոգում են մեր առողջության մասին:


Հիշիր, որ դրանք բոլորն էլ կարևոր են, մի հրաժարվիր դրանցից և ոչ մեկից:

Աշխատիր ավելի շատ միրգ ու բանջարեղեն ուտել, քան քաղցրավենիք:



1.


Թվարկե՛ք, թե ինչ եք սովորաբար ուտում կամ ինչ եք սիրում ուտել: Թվարկածը խմբավորեք, ինչպես նկարներում՝ մսեղեն, կաթնեղեն, միրգ-բանջարեղեն, հացեղեն-ձավարեղեն:





2.

Ճաշացանկերից ո՞րն է պարունակում սննդամթերքի բոլոր տեսակները:




1. Մեկ բաժակ կաթ, կոտլետով բրդուճ, տապակած կարտոֆիլ, խնձոր




2. Տապակած կարտոֆիլ, շոկոլադ, կոկա-կոլա

Ո՞րն կըմտրեիր:



1. Մեկ բաժակ կաթ, խնձոր



2. Մեկ բաժակ ջուր, տապակած ձուկ, հաց, կարագ, մեկ բանան

Ո՞րն կըմտրեիր:






1. Մեկ բաժակ թեյ, երշիկով ու պանրով պիցցա, կանաչ լոբի, պաղպաղակ



2. Մեկ բաժակ կակաո, ձվածեղ



1. Պաղպաղակ, բուլկի



2. Պոմիդոր-վարունգով և թթվասերով աղցան, հաց, նրբերշիկ



1. Բրնձով փլավ, հաց, լիմոնադ



2. Բանջարեղենի աղցան, տապակած միս, մակարոն, պանիր

Ո՞րն կըմտրեր:

Ո՞րն կըմտրեր:

Ո՞րն կըմտրեր:




Իսկ դու մարզվո՞ւմ ես

Բոլորս էլ սիրում ենք վազել, մագլցել, ճոճվել, սողալ, թռչկոտել: Ո՞վ չէր ուզի ամբողջ օրը բակում խաղալ: Իսկ գիտե՞ք, որ խաղալը ոչ միայն հաճելի է, այլև՝ օգտակար. շարժվելը մեզ օգնում է ճկուն, արագաշարժ ու առողջ լինել:

3. Նայի՛ր նկարին և ասա՛.

- Դո՞ւ ինչպես ես մարզվում:
- Ո՞ր խաղերն ես ամենից շատ սիրում:
- Իսկ սպորտի գնո՞ւմ ես:





Լրացրու նախադասությունները՝ օգտվելով տրված բառերից. **ոսկրեր, հիվանդությունները, մարմին, նախաձաշել, քնես, ատամներդ:**

Առավոտյան դպրոց գալուց առաջ չնոռանաս

Միրգ ու բանջարեղենից փախչում եմ:

Շատ կաթնամթերք ուտես՝ ամուր ու ատամներ կունենաս:

Եթե կանոնավոր մարզվես, գեղեցիկ ու ճկուն կունենաս:

Շատ քաղցրեղեն թես ուտես, կկորցնես:

Պետք է շուտ ու վաղ արթնանաս, որ առույգ, առողջ, խելացի դառնաս:



1.

Տառերի դասավորությունը փոխելով գուլշակի՛ր բառերը:



առձօ

դցնուց

նուշնապ,

քցնացո

նրաս

ոկազնախ

րփրուփ

կուծնա,

չիրբս

գսնուպ

և այլն:



Ինչի՞ն են վերաբերում դրանք:

Այդ բառերով նախադասություններ կազմի՛ր:

2. Գտի՛ր յուրաքանչյուր նախադասության կեսը և սովորի՛ր մաքուր լինելու կանոնները:

ՄԱՔՈՒՐ ԼԻՆԵՆԸ

1. Եղունգները երկարել են, հարկավոր է...

ա) ձեռքերդ պիտի օճառով լվանաս :

2. Դրսից տուն գալով, ուտելուց առաջ...

բ) մաքուր ու առողջ լինես :

3. Հիշիր, որ սրբիչը, խոզանակն ու...

գ) կտրել կամ խարտել:

4. Ձեռքերը ճաքճքել են, հարկավոր է...

դ) քնելուց առաջ և առավոտյան:

5. Եթե շնիկի կամ փիսիկի ես...

ե) կրեմ քսել:

6. Ատամների հիշիր մաքրել...

զ) շոյել, չմոռանաս օճառով լվացվել :

7. Հաճախ լոզանք ընդունիր, որ...


ը) սանրը ամենքինն առանձին պիտի լինեն :



3. Համեմատե՛ք նկարները և պատասխանե՛ք հարցերին.

- Ինչո՞վ են տարբերվում նկարները:
- Ո՞ր նկարն է ձեզ դուր գալիս: Ինչո՞ւ:
- Ի՞նչ կլինի, եթե մեր շրջապատը կեղտոտ թողնենք:
- Ինչո՞ւ է կարևոր մաքրությունը:
- Ի՞նչ ենք անում և ի՞նչ կարող ենք անել շրջապատը մաքուր պահելու համար:







Օգնե՛ք Պետիկին՝ հավաքել սենյակը:



ՓՆԹԻ ՊԵՏԻԿԸ

Պետիկը ոչ մի կերպ չի կարողանում իր սենյակը կոկիկ ու մաքուր պահել: Օգնե՛ք Պետիկին, հուշե՛ք, թե ո՞ր իրն ուր պիտի դնի, որ սենյակը հավաքվի:

Սենյակում թափթփված իրերն են.

1. կեղտոտ վերնաշապիկ
2. մաքուր վերնաշապիկ
3. կոշիկ
4. մատիտներ
5. սրբիչ
6. դասագրքեր
7. թղթի կտորտանք
8. խաղալիք մեքենաներ
9. դպրոցական պայուսակը
10. նախորդ օրվանից կիսատ թողած բրդուճով ափսեն

Իրերը պետք է.

- ա) դնել խաղալիքների դարակը
- բ) դնել կեղտոտ շորերի գամբյուղը
- գ) տանել խոհանոց, դատարկել և դնել վաճառարանի մեջ
- դ) կախել պահարանում
- ե) դնել գրասեղանի կողքը
- զ) մյուս գույգի հետ դնել պահարանի հատակին
- է) դնել գրասեղանին մատիտների տուփի մեջ
- ը) գցել աղբարկղը
- թ) դնել գրադարակը
- ժ) տանել լողարան՝ կախիչին կախել





1.

Լսե՛ք Շողիկի պատմությունը և ամեն անգամ, երբ աղջիկը որևէ վտանգավոր բան է անում, ծափ տվեք: Բացատրե՛ք, թե ինչո՞ւ է արարքը վտանգավոր:

ԱՆՁԳՈՒՅՑ ԶՈՂԻԿԸ

Ամառ էր: Շողիկը ողջ օրը բակում անցկացրեց: Ժամանակն արագ էր անցնում: Շողիկն զգաց որ քաղցած է ու սլացավ տուն մի բան ուտելու: Դուռը բացեց և վազեց ուղիղ խոհանոց: Գազօջախին մայրիկի տապակած համեղ կոտլետներով թավա էր դրված: Շողիկը ձեռքով մի հատը վերցրեց: Չէ, առանց հացի համեղ չէ: Դարակից վերցրեց սուր դանակը, որ հաց կտրի: Վա՛խ, այս ի՞նչ սուր ցավ էր: Մատն էր կտրել, ու արյունը կաթեց շորին: Շողիկը հիշեց, որ մայրիկն այդպիսի դեպքերում վերքին յոդ է քսում: Բացեց պատին կախված դեղարկղիկը, մեկ էլ աչքն ընկավ սիրուն, կարմիր գնդիկներով լի սրվակին: «Երևի կոնֆետ է», - մտածեց Շողիկն ու սրվակը վերցրեց, որ ընկերներով ուտեն:



Չետո ուզեց զգեստը փոխել: Արդուկը միացրեց, մեկ էլ լսեց դռան զանգը: Արդուկն արագ դրեց սեղանին ու վազեց դուռը բացելու՝ հայրիկն էր: Նա դեռ տուն չէր մտնել, երբ խոհանոցից եկող այրվող բանի հոտ զգաց Շողիկի զգեստն էր այրվում...

Ո՛վ իմանա, ի՞նչ կլիներ, եթե հայրիկը ժամանակին տուն չգար...







2.

Նայե՛ք նկարներին և փորձե՛ք պատասխանել հարցերին:


ԿՏԱՆԳՆԵՐԸ ՏԱՆԸ




- Ի՞նչ կլինի, եթե կտրող, ծակող, սուր առարկաները թափթփված թողնենք՝ ուր պատահի:



- Ի՞նչ կլինի, եթե դիպչենք էլեկտրական լարին կամ վարդակի հետ խաղանք:



- Ի՞նչ կլինի, եթե էլեկտրական սարքերը միացրած թողնենք:



- Ի՞նչ կլինի, եթե գազօջախի բռնակը մոռանանք փակել:



- Ի՞նչ կլինի, եթե լուցկու, կրակի հետ խաղանք:



- Ի՞նչ կլինի, եթե պատշգամբից կամ պատուհանից դուրս կախվենք:





- Ի՞նչ կլինի, եթե դուռը թակող անձանոթին ներս թողնենք:



- Ի՞նչ կլինի, եթե ինքնագուլիս դեղ խմենք:

3.

Հարցերի օրինակով գրե՛ք անվտանգության կանոններ՝ սկսելով «Չի՛ կարելի...» բառերով:

Օրինակ՝ **Չի՛ կարելի կտրող, ծակող, սուր առարկաները թափթփված թողնել ուր պատահի:**

4.

Գտի՛ր յուրաքանչյուր նախադասության շարունակությունը և համադրի՛ր:

Ի՞նչ անենք, եթե



1. Եթե գազի հոսք ես զգում, անմիջապես ասա ...
2. Եթե տանը մեռակ ես, և դուռը թակում են ...
3. Եթե փորձում են ձեր դուռը բացել ...
4. Եթե մեկն անզգուշաբար ...
5. Եթե հրդեհ է բռնկվել

- ա) զանգահարի՛ր 1-02, հարևանիդ կամ պատշգամբից օգնության կանչի՛ր մեծերին:
- բ) մեծերին, բաց արա լուսամուտը, զանգահարի՛ր 1-04:
- գ) թունավորվել է, զանգահարի՛ր 1-03:
- դ) անմիջապես դուրս արի տանից, ապա հարևանին խնդրի՛ր զանգահարել 1-01:
- ե) ոչ մի դեպքում դուռը բաց մի՛ արա:



5.

Գտի՛ր, թե ո՞ր հեռախոսահամարն ուճն է:



Ա

ՀԱԿԱՐԳԵՀԱՅԻՆ
ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



1-04



Դ

1-03

1-02

1-01



ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ





Մեծերի օգնությամբ լրացրու աղյուսակը և փակցրու հեռախոսի մոտ կամ երևացող տեղում:

Վտանգի դեպքում հիշի՛ր

- Իմ հասցեն փողոց
շենք մուտք բնակարան
- Իմ հեռախոսը
- Ծնողներիս
աշխատավայրի հեռախոսը հայրիկ
մայրիկ
- Անմիջական հարևանների
հեռախոսները
- Մոտ բնակվող ազգական-
ների հեռախոսները
- Հրշեջ ծառայություն
- Ոստիկանություն
- Շտապօգնություն
- Գազի վթարի դեպքում





1.

Լսե՛ք պատմությունը և ամեն անգամ, երբ Շողիկը խախտում է անվտանգության կանոնները, ծափ տվեք: Բացատրե՛ք, թե ո՞րն է վտանգը:

ՇՈՂԻԿԸ ՓՈՂՈՑ Է ԴՈՒՐՍ ԵԿԵԼ

Շողիկը փողոց էր դուրս եկել: Փողոցը լի էր մարդկանցով, և բոլորն ինչ-որ տեղ էին շտապում: Շողիկն անցորդներին հրմշտելով, մայթից իջավ, որ առաջ անցնի: Բայց քիչ մնաց մի հսկա բեռնատարի տակ ընկներ... Հագիվ հասցրեց մի կողմ ցատկել ու որոշեց վերադառնալ բակ: Միացավ պահմտոցի խաղացող ընկերներին ու վազեց նկուղում թաքնվելու: Նկուղի աստիճաններին էլեկտրական լարեր էին ընկած: Շողիկը դրանց ուշադրություն չէր էլ դարձնի, եթե այդ պահին մի քեռի չհայտնվեր ու իրեն հետ չքաշեր... Շողիկը մտածեց, որ ծառն էլ վատ թաքստոց չէ, ու մազլցեց բակի հսկա ընկուզենու վրա: Եր՞՞ռ, ծառի ծյուղը կտտրվեց, ու աղջիկը ցած ընկավ: Դեռ լավ է, որ ծյուղը ցածր էր, թե չէ՛ ի՞նչ իմանաս, ի՞նչ կպատահեր չարածճի աղջկան... «Գնամ տատիկի մոտ, - մտածեց Շողիկը, - հաստատ կարկանդակ թխած կլինի»:

Տատիկը հեռու չէր ապրում՝ գետակի մյուս ափին: Կամրջակը հեռու էր, և Շողիկը որոշեց, որ կարելի է գետակը քարից քար ցատկելով անցնել: Գետակը, ճիշտ է, խոր չէր, բայց արագահոս էր:



Հագիվ մյուս ափ հասավ, ուր մի շուն էր կանգնած: Շողիկն էլ ոչ դես, ոչ դեն, քարը վերցրեց ու նետեց շան վրա: Շունը հաչոցով ընկավ նրա հետևից: Շողիկն արագավազ էր ու, բախտի բերմամբ, ավելի շուտ տատիկի տուն հասավ...





2.

Գտե՛ք յուրաքանչյուր նախադասության կետը և ստացե՛ք փողոցում անվտանգ վարքագծի կանոնները:

3. Զաղաքից դուրս ճանապարհով քայլելիս, քայլե՛ք

կարելի, նույնիսկ, եթե մեքենաներ չկան:

4. Փողոցն անցե՛ք

1. Փողոցում միշտ բռնե՛ք

անցումով, միայն լուսակրի կանաչ լույսով:

5. Շիչե՛ք, որ կարմիր լույսը

8. Փողոցն անցնելիս պետք է նախ

նայել ձախ, ապա՝ աջ:

6. Փողոցում մի՛ խաղացեք և

մեծահասակի ձեռքը:

7. Կարմիր լույսով փողոցն անցնել չի՛

մեքենաների շարժմանը հակառակ ուղղությամբ:

կարգադրում է կանգնել:

2. Զաղաքում միշտ միայն

մայթով քայլե՛ք:



3.

Դրսում ապահով լինելու համար հիշե՛ք ՄԻ՛ բառով սկսվող մի քանի կանոն:

- ՄԻ՛ շեղվիր ճանապարհից՝ դպրոցից տուն գնալիս:
- ՄԻ՛ մնա դրսում մութն ընկնելուց հետո:
- ՄԻ՛ խոսիր անձանոթի հետ, նրա հետ տեղ մի՛ գնա:
- ՄԻ՛ անցիր փողոցը կարմիր լույսով, նույնիսկ եթե մեքենաներ չեն երևում:
- ՄԻ՛ իջիր մայթից, մի՛ քայլիր փողոցով:
- ՄԻ՛ խաղա փողոցում, ճանապարհի վրա:
- ՄԻ՛ հեռացիր տանից՝ առանց զգուշացնելու, ծնողներդ միշտ պետք է իմանան, թե որտեղ ես:





Նկարի վրա գտիր 2 հոգու, որոնք գիտեն փողոցում անվտանգության կանոնները և 2 հոգու, որոնք չգիտեն դրանք:



1.

1. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Կարլսոնի համար վտանգավոր չէ լուսամուտից կամ պատուհանից կախվելը, իսկ ձեզ համար վտանգավոր է:



2. Մտածե՛ք. Կարմիր Գլխարկի տատիկը ի՞նչ սխալ թույլ տվեց:

3. Ի՞նչ պատահեց Գնդլիկ-Բոբոնիկին, երբ նա առանց թույլտվության զբոսանքի գնաց:



4. Գնդլիկ-Բոբոնիկն անվտանգության ո՞ր կանոնը չգիտեր:

5. Ի՞նչ մեքենայով կհամաձայնեիր անծանոթի հետ զբոսանքի գնալ՝ Մերսեդեսո՞վ, ԳԱՁ-24ո՞վ, թե՞ Ջիփով:



6. Ո՞ր հեքիաթի հերոսուհին է անծանոթ պառավից հյուրասիրություն ընդունում, և դրա հետևանքով ի՞նչ է պատահում:





9. Եթե անձանոթը փողոցում մոտենա և ասի, որ հայրիկն ու մայրիկն իրեն խնդրել են քեզ կրկես կամ տիկնիկային թատրոն տանել, կզնա՞ս նրա հետ: Ինչո՞ւ:

8. Ո՞ր հեքիաթի հերոսը դպրոցի փոխարեն տիկնիկային թատրոն գնաց, և ի՞նչ պատահեց նրան:

10. Փողոցն անվտանգ անցնելու համար ի՞նչ պետք է իմանալ:



11. Վինի թուխը մեղր ձեռք բերելու համար ի՞նչ վտանգավոր արարք կատարեց:


7. «Քնած գեղեցկուհին» հեքիաթում արքայադուստրն անվտանգության ո՞ր կանոնին ծանոթ չէր:



ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- 1. Երևանի քաղաքում
- 2. Երևանի քաղաքում
- 3. Երևանի քաղաքում
- 4. Երևանի քաղաքում
- 5. Երևանի քաղաքում
- 6. Երևանի քաղաքում
- 7. Երևանի քաղաքում
- 8. Երևանի քաղաքում
- 9. Երևանի քաղաքում
- 10. Երևանի քաղաքում
- 11. Երևանի քաղաքում







ԱՆՃԱՆՈՒԹ ՍՈՒՆԿ ՈՒ ՀԱՏԱՊՏՈՒՂ ԵՄ ԿԵՐԵԼ ՈՒ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼ ԵՄ:

6 քայլ



ԻՆՔՆԱԳԼՈՒՈՒ ՂԵՂ ԵՄ ԽՄԵԼ:

6 քայլ



ԾԱՌ ԵՄ ՏՆԿԵԼ:

3 քայլ



ՀԱՅՐԻԿԻՂ-ՉԳՈՒՇԱՑՐԵԼ ԵՄ, ՈՐ ՉՇԵԻ:

3 քայլ



ԾԱՌԸ ՎՆԱՍԵԼ ԵՄ:

3 քայլ



ԸՆԿԵՐԱՍԵՐ ԵՄ, ԸՆԿԵՐՆԵՐԻՂ ՀԵՏ ՀԱՍԵՐՈՇԻ ԵՄ:

3 քայլ



ՄԵՆԱԿ ԳՆՈՅԵԼ ԵՄ ԳԵՏՈՒՄ ԼՈՂԱՆԱԼՈՒ:

6 քայլ



ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆ ԵՄ ՓՇՈՅՐԵԼ:

4 քայլ



ԵՂՈՒՆԳՆԵՐԴ ԿՏՐԵԼ ԵՄ, ԱՊԱ ՉԵՈՔԵՐԴ ԼՎԱՑԵԼ:

3 քայլ



ԱՂԲԸ ԳԵՏՆԻՆ ԵՄ ԹԱՓԵԼ:

4 քայլ





ԹՈՒՂԹ ԵՄ
ՓՉԱՅՐԵԼ, ՈՒՐԵՄՆ
ԵՎՄ ՄԵԿ ԾԱՌ Է
ԿՏՐՎԵԼՈՒ:

3 քայլ



ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ՎԱՐԳԱԿԻ ՀԵՏ ԵՄ
ԽԱՂԱՑԵԼ:

6 քայլ



ԿԵՂՏԵՐԻ ՄԵՋ
ՆՍԱՑ
ՈՒՏՈՒՄ ԵՄ:

3 քայլ



ՄԱՔՐԱՍԵՐ
ԵՐԵԽԱ ԵՄ:

3 քայլ



ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԼՈՂԱՆՈՒՄ ԵՄ:

4 քայլ



ԿՐԱԿԻ ԿՈՂՔԸ
ԽԱՂՈՒՄ ԵՄ:

6 քայլ



ԳԻՏԵՄ, ՈՐ
ԿԵՂՏՈՏ ՏԵՂՈՒՄ
ԿԵՐԱԿՈՒՐ ՉԵՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ:

3 քայլ



ՀԱԶԱԼՈՒՑ
ԲԵՐԱՆՉ
ԾԱՅԿՈՒՄ ԵՄ:

2 քայլ



ԺՄՄՆԱԿԻՆ
ՊԱՏՎԱՍՏՎՈՒՄ ԵՄ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԴԵՄ:

3 քայլ



ՆԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ
ԵՄ ԱՐԵԼ ԾՈՎՆ
ԱՂՏՈՏՈՂՆԵՐԻՆ:

3 քայլ





ՄԻՇՏ
ԿԱԹ, ՄԱԾՈՒՆ
ԵՎ ՄԻՐԳ ԵՄ
ՈՒՏՈՒՄ:

4 քայլ



ԲԺՇԿԻ
ՆՇԱՆԱԿԱԾ
ԴԵՂԵՐԸ
ԿԱՆՈՆԱՎՈՐ
ԸՆԴՈՒՑՆՈՒՄ ԵՄ

3 քայլ



ԲԵՆՆԱՏԱՐԻ
ԹԱՓՔԻՑ ԵՄ
ԿԱՆԿԵԼ:

6 քայլ



ՄԻՐԳՆ ԱՈՒՆՑ
ԼՎԱՆԱԼՈՒ ԵՄ
ԿԵՐԵԼ:

4 քայլ



ՀԱՎԱՔԵԼ ԵՄ
ԹԱՓԹՓՎԱԾ
ՏՈՊՐԱՄԿՆԵՐԸ ՈՒ
ՇՇԵՐԸ

4 քայլ



ԿԱՐԳԱԼԸ
ՇԱՏ ԼԱՎ
ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է

3 քայլ



ԸՆԿԵՐՈՋԴ
ԶԳՈՒՇԱՅՐԵԼ ԵՄ,
ՈՐ ԱՂԹԸ ԳԵՏՆԻՆ
ՉԳՑԻ:

3 քայլ



ԶԳՈՒՇԱՅՐԵԼ ԵՄ,
ՈՐ ԹՔԵԼ
ՉԻ ԿԱՐԵԼԻ:

3 քայլ



ԿՐԱԿԻ ՀԵՏ ԵՄ
ԽԱՂԱՑԵԼ:

6 քայլ



ԿԱՆՈՆԱՎՈՐ
ԿԵՐՊՈՎ
ԼՎԱՆՈՒՄ ԵՄ
ԱՏԱՄՆԵՐԴ:

3 քայլ





ՕԳՆԵԼ ԵՄ
ՄԱՐԴԿԱՆՑ:

4 քայլ



ՄԻՐՈՒՄ ՈՒ
ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՄ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ:

4 քայլ



ՋՈՒԳԱՐԱՆԻՑ
ՀԵՏՈ ՉԵՈՔԵՐԴ
ԼՎԱՆՈՒՄ ԵՄ:

3 քայլ



ԿԵԴԱՆԻՆԵՐԻՆ
ՆԵՂԱՑՐԵԼ ԵՄ:

4 քայլ



ՉԵՈՔԵՐԴ ՈՒ
ԵՐԵՄԴ ՉԵՍ
ԼՎԱՑԵԼ:

3 քայլ



ԸՆԿԵՐԱՍԵՐ ԵՄ,
ԸՆԿԵՐՆԵՐԻԴ
ՀԵՏ
ՀԱՄԵՐԱՇԽ ԵՄ:

3 քայլ



ԹՈՂՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆԵՐ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ
Առատ ու անփույթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղևը կապույտ:

Մի օր էլ, բնից գլուխս հանած,
Նայում եմ դես-դեն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած՝
Մեր բունը վրեն:

Նրանից հետո աչքս բաց արի
Մի փոքրիկ բնում,
Տեսա՝ աշխարհքը հարդից է շինած,
Ու մայրս է շինում:

Հիմի թռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,
Ամեն տեղ գնում,
Բայց թե աշխարհքը ինչի՞ց է շինած
– էլ չեմ հասկանում:



Հովհաննես Թումանյան



■ Նկարագրի՛ր աշխարհը, ինչպես որ դու ես պատկերացնում:

Քո սիրած բաները, իմ սիրած բաները...

Ո՞րն է քո սիրած ուտելիքը,
Ո՞րն է քո սիրած թիվը,
Ո՞րն է քո սիրած գույնը,
Պատմի՛ր ինձ մի քիչ քո մասին:

Իմ սիրած ուտելիքը տորթն է,
Իմ սիրած թիվը՝ յոթը,
Իմ սիրած գույնը կարմիրն է,
Ու շատ եմ սիրելի մարդիկ:

Իմ սիրած ուտելիքը սպասն է,
Իմ սիրած թիվը՝ տասը,
Իմ սիրած գույնը կանաչն է,
Իմ սիրած մարդը՝ ես:

Ո՞րն է քո սիրած ուտելիքը,
Ո՞րն է քո սիրած թիվը,
Ո՞րն է քո սիրած գույնը,
Պատմի՛ր ինձ մի քիչ քո մասին:

Իմ սիրած ուտելիքը թութն է,
Իմ սիրած թիվը՝ ութը,
Իմ սիրած գույնը դեղինն է,
Իմ սիրած մարդը՝ դու:

ՊՍՏԻԿ - ՃՈՒՏԻԿԸ

Մի օր Պստիկ-ճուտիկը քուջուջ էր անում ծառի տակ: Հանկարծ ծառից մի տերև պոկվում, ընկնում է ճուտիկի պոչին:

- Վա՛յ ինձ, - մտածում է ճուտիկը, - աշխարհը փուլ է գալիս, - ու վախեցած սկսում է փախչել: Փախչում է, փախչում, հանդիպում է Հավ-Մարիկին:

- Ո՞ւր ես վազում, Պստիկ-ճուտիկ:

- Աշխարհը փուլ է գալիս:

- Քեզ ո՞վ ասաց:

- Ես իմ աչքով տեսա, իմ ականջով լսեցի, դեռ մի կտորն էլ պոչիկիս ընկավ:

- Դե արի փախչենք, փախչենք, փախչենք:

Վազում են, վազում, հանդիպում են Սագիկ-Մագիկին.

- Ո՞ւր եք վազում, Հավ-Մարիկ:

- Բա չե՛ս ասի, աշխարհը փուլ է գալիս:

- Քե՞զ ով ասաց, Հավ-Մարիկ:

- Պստիկ-ճուտիկը ասաց: Նա իր աչքով է տեսել, իր ականջով է լսել, դեռ մի կտորն էլ պոչիկին է ընկել:

- Դե եկեք փախչենք, փախչենք, փախչենք:

Վազում են, վազում, հանդիպում են Հնդու-Թնդուին.

- Ո՞ւր եք վազում, Սագիկ-Մագիկ:

- Բա չես ասի՞, աշխարհը փուլ է գալիս:

- Քեզ ո՞վ ասաց:

- Հավ-Մարիկը ասաց:

- Քե՞զ ով ասաց, Հավ-Մարիկ:

- Պստիկ-ճուտիկը ասաց: Նա իր աչքով է տեսել, իր ականջով է լսել, դեռ մի կտորն էլ պոչին է ընկել:

- Դե եկեք փախչենք, փախչենք, փախչենք:

Բոլորով միասին սարսափահար փախչում են, մեկ էլ թեթև քամի է բարձրանում, ու նորից մի տերև ընկնում է Պստիկ-ճուտիկի պոչիկին...

Բոլորը զարմացած նայում են մեկ ճուտիկին, մեկ տերևին, քահ-քահ ծիծաղում են ու ուրախ-ուրախ վերադառնում են տուն:



- Ընկերներն ինչո՞ւ ծիծաղեցին Պստիկ-ճուտիկի վրա:
- Ի՞նչ էր տեսել, ի՞նչ էր լսել ճուտիկը:
- Ի՞նչ էին տեսել ու լսել ճուտիկի ընկերները:

Շողիկն ու Պեծիկը

Չմռան իրիկուն էր: Չյուն էր գալիս, ու ծյան ուրախ փաթիլներն ընկնում էին մութ գետնի վրա ու քնում:

Բոլորի հետ երկու փաթիլ օդի մեջ խաղ անելով գալիս էին ցած: Քույր ու եղբայր էին. քրոջ անունը Շողիկ էր, եղբորը՝ Պեծիկ:

Օդի մեջ պտտվելիս մի պատուհան տեսան, որից պայծառ լույս էր երևում:

- Վա՛յ, ի՞նչ լավ լույս է,- ասաց Շողիկն ու թռավ դեպի լույսը, գնաց թառեց պատուհանի ճաղի վրա:

- Վա՛յ, ի՞նչ լավ լույս է,- ասաց Պեծիկն ու ինքն էլ մոտեցավ, որ նստի երկաթե ճաղին, բայց ոտքը սահեց, ընկավ ցած՝ մի թաց քարի:

- Շողիկ, ընկա, - ասաց Պեծիկը:

- Պե վեր բարձրացիր, - ասաց Շողիկը վերևից:

Պեծիկն ուզեց վեր թռչի՝ չկարողացավ:

- Չեմ կարող, - ասաց, - արի մոտս, Շողիկ:

- Հիմա կգամ, իսկույն, սպասիր տեսնեմ՝ ինչ եմ անում, - պատասխանեց Շողիկն ու նայեց պատուհանից ներս:

Ներսը մի սիրուն տոնածառ կար, կանաչ ճյուղերը վառվռուն լամպերով ու խաղալիքներով զարդարված: Լամպերը վառվում, պեծին էին տալիս ու ուրախ թարթում: Սենյակը լիքը երեխա էր: Ամենքն ուրախ պար բռնած ծառի չորս կողմը պտտվում ու երգում էին ու երգելիս էլ, երբ զվարթ աչքերը գցում էին ծառից կախված ձիերին, արջերին, կոնֆետներին ու ոսկեգօծ ընկույզներին, ավելի էին ուրախանում, ծափ տալիս, թռչկոտում: Շողիկի աչքերը շլացան, երբ նայեց տոնածառին:

- Ի՞նչ լավ տոնածառ է, - մրմնջաց նա:

- Ես էլ եմ ուզում տեսնել, - ծայն տվեց Պեծիկը և էլի փորձեց վեր կենալ՝ չկարողացավ:

- Շողիկ, արի:

- Հիմի կգամ, Պեծիկ ջան, հիմի:

- Պե շուտ, արի:

- Ա՛յ, հիմի, հիմի, - ասում էր Շողիկն ու նայում ներս:

Պեծիկը թաց, մութ քարի վրա դողում էր ու սպասում քրոջը: Բայց Շողիկն այնքան էր տարվել տոնածառով, որ էլ մոռացել էր Պեծիկին: «Ի՞նչ լավ բան է տոնածառը», - մտածում էր նա: Այդ միջոցին երեխաները երգեցին Նոր տարվա երգը: Շողիկն էլ ուզեց նրանց հետ երգել, չկարողացավ: Միայն պայծառ շողշողաց ու ծիծաղեց:

- Շողիկ, դե արի, - ծայն տվեց Պեծիկը լացակումած:

Բայց Շողիկն էլ չէր լսում:

Շուտով երեխաներին միրգ բաժանեցին և վերջն էլ տոնածառի ծիերը, նապաստակը, կոնֆետներն ու ոսկեգօծ ընկույզները տվեցին նրանց:

- Օխայ, օխայ, - գոչում էին երեխաներն ու ուրախ-ուրախ ծափ տալիս:

Շողիկն էլ էր ուզում ասել «օխայ»՝ չկարողացավ, միայն ուրախ ժպտաց:

Շուտով տոնածառը վերջացավ, և երեխաները իրենց նվերների հետ ցրվեցին տները: Հանկարծ Շողիկը հիշեց Պեծիկին:

- Պեծիկ, - ծայն տվեց անհանգիստ:

Բայց Պեծիկն էլ չկար... Ցած նայեց Շողիկն ու տեսավ, որ Պեծիկը թաց քարի վրա այնքան լացել, լացել էր, որ հալվել, կորել էր: «Վայ», - ասաց Շողիկը, տխրեց-մնաց պատուհանի ճաղին մենակ նստած: Տխրեց, տխրեց, վերջն էլ աչքերից արցունք վազեց, ու նա էլ հալվեց ու ընկավ թաց քարի վրա՝ կորավ...

Դերենիկ Դեմիրճյան



Ի՞նչ էր տեսնում, լսում, զգում Շողիկը:

Ի՞նչ մտածեցիք, ի՞նչ զգացիք հեքիաթը լսելիս:

ՓԱՓԼԻԿՍԱՆ

Լինում է չի լինում, հեռավոր ժամանակներում, լեռներում կորած մի փոքրիկ երկիր է լինում, անունը՝ Փափլիկստան: Փափլիկստանի մարդիկ բարյացակամ էին ու միշտ պատրաստ էին օգնել միմյանց: Այդ երկրում հենց որ երեխա էր ծնվում, նրան մի տոպրակ էին տալիս՝ մեջը տաքուկ-փափլիկներ: Եթե տխրում էին կամ վատառողջ զգում, տաքուկ-փափլիկը տոպրակից հանում էին ու իսկույն առողջանում, երջանիկ էին դառնում: Եթե տաքուկ-փափլիկը կարճ ժամանակով կորցնում էին, հիվանդանում էին «տաքուկ-փափլիկային սուր անբավարարությամբ»: չորանում-կծկվում էին ու այնքան էին տկարանում, որ ամոթից թաքնվում էին, որպեսզի իրենց ոչ ոք չտեսնի: Տաքուկ-փափլիկ ճարելը դժվար բան չէր: Ընդամենը հարկավոր էր որևէ մեկին մոտենալ ու խնդրել. «Կարո՞ղ եք ինձ մի տաքուկ-



փափլիկ տալ», ու դիմացինը հաճույքով տալիս էր: Բայց մի օր մի վիուկ պառավ է գալիս Փափլիկստան ու փորձում է իր թուրմերն ու քսուքները վաճառել տեղացիներին: Երբ ոչ ոք չի ցանկանում դրանք գնել, վիուկը կատաղում է ու կախարդում բոլորին: Մարդկանց սկըսում է թվալ, թե տաքուկ-փափլիկները քիչ են, կվերջանան ու իրենց չեն հերիքի: Նրանք ագահ ու ժլատ են դառնում: Աչքներին երևում է, թե չորանում-կծկվում են: Սկսում են վիուկի դեղերն առնել, կարծելով, թե դրանք իրենց կբուժեն: Իսկ վիուկ պառավը մի նոր խորամանկություն է մտածում. բոլորին տոպրակներ է բաժանում՝ տեսքից տաքուկ-փափլիկի տոպրակի նման, բայց մեջը սառը-փշոտներ: Մարդիկ սկսում են սառը-փշոտներ գործածել ու արդյունքում դառնում են սառը, եսասեր ու դյուրագրգիռ: Հայտնի չէր, թե այս ամենն ինչպես կվերջանար, եթե Փափլիկստան չգար մի բարի փերի: Նա ոչինչ չէր լսել չար կախարդի ու նրա սև գործերի մասին և չէր վախենում, թե տաքուկ-փափլիկները կվերջանան: Սկսում է դրանք առատորեն բաժանել մարդկանց: Ցավոք, մարդիկ արդեն այնքան թերահավատ էին դարձել, որ սկզբում մերժում էին փերիին, չէին ուզում տաքուկ-փափլիկներ վերցնել: Բարեբախտաբար, երեխաները հասցրել էին ընկերանալ նրա հետ և օգնում էին դրանք մարդկանց մեջ տարածել:

Շուտով Փափլիկստանի բնակիչները նորից բարիացան, սկսեցին միմյանց օգնել, և կյանքն էլի անհոգ ու երջանիկ դարձավ:

Չար կախարդը ճարահատյալ ստիպված էր ունեցած-չունեցածը հավաքել և չքվել այդտեղից՝ հույս ունենալով իր սառը-փշոտները մի ուրիշ տեղ տարածել:



- Տաքուկ-փափլիկների փոխարեն ի՞նչ կարող ենք մեր սիրելի մարդկանց տալ, որ նրանք էլ իրենց երջանիկ զգան:

1

Գյուղացին իր բոստանում
Գարնանը սերմ էր ցանում :
Արջը եկավ.

- Բարև քեզ.

Ի՞նչ ես անում քեզ ու քեզ.
Արի՛, այ մարդ, միանանք,
Մեկտեղ անենք վար ու ցանք,

Վար ու ցանքը մեր կիսրար,
Հունձն էլ անենք հավասար:

- Աչքի՛ս վրա, արջ ապեր,
Օտար հո չե՞նք, կուզես բեր
Հենց առաջին անգամը

Ցանենք մոտիս շաղգամը:
Ինձ արմատը հողումը,
Քեզ տերևն ու ցողունը :

2

Քաղցր ու խոշոր շաղգամը
Հողում տոզեց աշնանը :

Արջ ախպերն ու գյուղացին
Շաղգամը հողից հանեցին :

Ապերն առավ տերևը,

Արմատներն էլ՝ ընկերը:

Արջը տեսավ, որ խաբվեց,

Մարդու դեմը քիչ լարվեց :

«Վայ, ինձ խաբե գյուղացին,

Կաց, էն մյուս ցանոցին,

Ինչ որ ցանենք հողումը,

Նրան կտամ ցողունը»:

3

Մյուս տարի ցանոցին
Արջին ասավ գյուղացին.

- Ապեր, արի՛ մենք էլի

Մի բան ցանենք կիսովի :

Արջը թե՛ «Հա, շատ բարի,

Միայն անշուշտ այս տարի

Ինձ արմատը հողումը,

Քեզ տերևն ու ցողունը»:

- Համաձայն եմ ես նորեն,

Հիմա ցանենք մենք ցորեն:

Մարդը գիտեր իր բանը,

Ապոր հետը՝ իր տանը՝

Ցորենն աժեց տոպրակը,

Տվեց նրա շալակը.

Եվ ցանեցին մեծ արտը

Բրդոտ ապերն ու մարդը :

4

Ընկերները հունիսին

Արտն հնձեցին միասին,

Հասկերն ընկան գյուղացուն,

Իսկ արմատը՝ սարեցուն :

Արջն էլ չհամբերեց,

Այդտեղ մի լավ փրփրեց.

Արդեն սաստիկ նեղացավ,

Թքեց, մարդուց հեռացավ :

Ու այն օրից մինչ հիմի

Դարձավ մարդուն թշնամի:

Արաբեկ Խնկոյան



■ Ի՞նչ չգիտեր արջը, որի պատճառով էլ գյուղացին կարողացավ խաբել նրան:

ՇԱՆԵԼՈՒԿՆԵՐ

- Ամառ-ձմեռ միշտ դրսում,
Ոչ շոգում է, ոչ մրսում,
Մեկ կանաչ է, մեկ՝ դեղին
Ամուր կպած է հողին:

(մայր)

- Վառվում է անվերջ
Դարեր ու դարեր
Եվ ոչ մի հրշեջ
Չի կարող մարել:

(միմ)

- Չմռանը լռում է,
Գարնանը՝ խոսում
Ու տարին բոլոր
Վազում է դրսում:

(մտղե)



ՈՒԼՈՒՆԶ

Գարունը եկավ ամպերով,
Ամպերը եկան անձրևով.
Անձրևը տանեն արտին տան,
Արտը ինձ ցորեն տա.
Ցորենը տանեն ջաղացին տան,
Ջաղացը ինձ ալյուր տա.
Ալյուրը տանեն տաշտին տան,
Տաշտը ինձ խմոր տա.
Խմորը տանեն բոնրին տան,
Թոնիրը ինձ հաց տա.
Հացը տանեն բոշին տան,
Բոշեն ինձ ուլունք տա.
Ուլունքը տանեն նանիս տան...



Հովհաննես Թումանյան

- Տարվա ո՞ր եղանակին է հաճախ անձրևում:
- Ինչի՞ն է օգուտ անձրևը:

ՀԱՆՆԵՆՈՒԿՆԵՐ

- Ծնվեց անպից, զով արեց,
Ծիլ ու ծաղիկ ծով արեց: (Միլսթրոմ)
- Գալիս՝ անտես փարվում է,
Առանց ավել ավլում է,
Բերան չունի՝ սուլում է,
Թևեր չունի՝ թռչում է: (Եվգոմժ)
- Ձյունն ճերմակ ծածկի տակից,
Ինչպես մանուկն օրորոցից,
Ո՞ր ծաղիկն է մեզ հյուր գալիս,
Գարնան գալը ինաց տալիս: (Միլվստոջջ)
- Կլոր է՝ գնդակ չէ,
Թռչում է՝ թիթռ չէ,
Ջրի մեջ ջուր է նա,
Սառույցին քույրն է նա: (Մտտսիմոի)

ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

Ամպը եկավ նստեց սարին,
Նստեց սարի սուր կատարին:
- Լսի՛, պապի, ասավ նրան,
Լավ օրերդ անցան, կորան.
Խիստ սոսկալի
Ցուրտ է գալի:
Ասավ, գնաց:
Սարը կամաց
Մտավ սպիտակ
Վերմակի տակ:



Հովհաննես Թումանյան

ԱՌԱՋԻՆ ԶՅՈՒՆԸ

- Վա՛յ, մայրի՛կ ջան, տե՛ս,
Բակն ու դուռը լի
Ինչքա՛ն սպիտակ
Թիթեռ է գալի...
Եսքան շատ թիթեռ
Չեմ տեսել ես դեռ:
- Չէ՛, իմ անուշի՛կ,

Թիթեռներ չեն եղ.
Թիթեռներն անցան
Ծաղիկների հետ:
Եղ ձյուն է գալի,
Փաթիլն է ձյունի,
Որ կարծես սպիտակ
Թիթեռնիկ լինի:

Հովհաննես Թումանյան



ԾԱՂԻԿՆԵՐԸ

- Ո՞ւր գնացին ծաղիկները:
- Սու՛ս, քնած են հողի տակ,
Տաք ծածկված ողջ ծմեռը
Ձյուն-ծածկոցով սպիտակ:

«Ելեք, կասի, իմ մանուկներ».
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կհանեն գլխիկները,
Աչիկները կբանան:

Կգա գարնան արևն էլ ետ
Իր շողերով կենդանի,
Չմռան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կտանի:

Հովհաննես Թումանյան



- Չմռանն է՞լ ինչ փոփոխություններ են տեղի ունենում բնության մեջ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

- Ասես՝ սպիտակ թիթեռ եմ,
Որ ամեն տեղ կթառեմ,
Չմռանը՝ դաշտ ու անտառում
Գերմակ վերմակ կփռեմ:

(Սեդրակ)

- Գերմակ է՝ շաքար չի,
Կարծր է, բայց քար չի,
Հենց տաքացավ, կհալչի:

(Սեդրակ)


- Թե գլորեք ծյան վրա՝
Ես կաճեմ, կնեծանամ,
Իսկ թե պահեք կրակին՝
Կհալչեմ, կչքանամ:

(Սեդրակ)

ԱՃՆԱՆ ՎԵՐՋԸ

Սարի լանջին,
Մեգի միջին
Խոխոջում է
Ու տրտնջում
Ջուրը բարակ,
Ջուրը տխուր.
-Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,
Ո՞ւր կորան, ո՞ւր,

Տերև ու խոտ,
Վարդը շաղոտ,
Սարվորն ուրախ,
Սրինգ ու խաղ:
Շուրջս դատարկ,
Շուրջս տխուր...
- Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,
Ո՞ւր կորան, ո՞ւր:



← Թունանյան



- ԱճՆԱՆԸ Է՞՛Լ ԻՆչ փոփոխություններ են տեղի ունենում բնության մեջ:

ՏԵՐԵՎԱԹԱՓ

- Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,-
Ասավ քամին տերևներին,-
Աշուն եկավ, մոտ է ծնեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Ոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Եկեք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ...
Եկեք տանեմ հեշտ ու անթև,

Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այնուհետև...
Էլ ինչ է դող, ինչ է ծնեռ...

Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սվսվալով տխուր երգեր՝
Քամու թևին թռան, փախան:

Հովհաննես Թումանյան



- Ո՞ր ծառերն են, որ աշնանը տերևաթափ չեն լինում:
Կարո՞ղ ես այդպիսի ծառերի օրինակներ ասել:

ԱՅՈՒՆ

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեզի հետ
Փչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին:
Տխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

Հովհաննես Թումանյան

ՔԱՄԻՆ

- Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ...
Քամին է, քամին,
Տես անզգամին.
Բերան չունի՝ փչում է,
Թևեր չունի՝ թռչում է,
Ձեռքեր չունի՝ քաշում է,
Իմ փոքրիկին քշում է:

Կորի՛, դու քամի,
Անպիտան քամի:
Մի՛ վախի, ջանիկ,
Փեշս պինդ պահի,
Ես թող չեմ անի,
Քամին քեզ տանի:

Հովհաննես Թումանյան



■ Տարվա ո՞ր եղանակն ինչի՞ համար ենք սիրում:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

- Ձեռքեր չունի, ներկեր չունի,
Դաշտ է ներկում հազար գույնի:

(դրաշմ)

- Անծրև է մաղում,
Քամին է խաղում,
Տերևն է դողում,
Այդ ե՞րբ է լինում:

(մրաշմ)

- Այս երկու
նկարների միջև
առնվազն 12
անհամապա-
տասխանություն
կա:
Կարո՞ղ եք գտնել:



ՄՈԾԱԿԸ

(առակ)



Արջը մի օր Լապաստակին նեղացրեց. առանց պատճառի բռնեց ու ծեծեց նրան:

Շլդիկը լաց եղավ, բայց ի՞նչ անի, ունի՞ց օգնություն խնդրի, երբ Արջն անտառում ամենաուժեղն է, դեռ Գայլն

ու Աղվեսն էլ մտերիմ ընկերներն են: «Ինձ ո՞վ կօգնի», - բարձրաձայն մտորում էր Շլդիկը, մեկ էլ ականջի տակ Մոծակի տղզոցը լսեց. «Ես»: «Դու ինչպե՞ս կարող ես ինձ օգնել, - զարմացավ Շլդիկը, - մի քեզ նայիր, քո չափերին ու Արջին»: «Անհոգ եղիր», - ասաց Մոծակը: Թռավ, գտավ Արջին, որ շոգից ծառի ստվերի տակ պատսպարվել էր ու քնել: «Տ՛ղզզ», - Մոծակը սկսեց Արջի ականջի տակ իր երգը երգել: Արջն արթնացավ, ուզեց Մոծակին սատկացնել, ու տուր թե կտաս ողջ ուժով խփեց սեփական քթին: Այսպես ողջ օրը շարունակվեց. բավական է Արջն ուզեմար աչքերը փակել՝ Մոծակն ականջի տակ սկսում էր տղզալ: Արջը փորձում էր սատկացնել, բայց ամեն անգամ ինքն իր ձեռքից ծեծ էր ուտում: Հաջորդ առավոտ Արջն արդեն անքնությունից հյուժվել էր, չէր կարողանում ոտքի կանգնել, աչքերը փակվում էին: Շլդիկը տեսավ նրան, ու ծիծաղը եկավ: «Հը, - ասաց Մոծակը, - իսկ դու ասում էիր՝ փոքր եմ, Արջի հախից չեմ կարող գալ»:

Սերգեյ Միխալկով



- Փորձիր թվարկել, թե քո իմացած կենդանիներից ո՞վ ինչպես է պաշտպանվում:

ՀԱՎՄԱՐԻԿՆ ԻՐ ԶՎԻԿՆ Է ՓՆՏՐՈՒՄ

Զգիտեմ, թե ինչպես է պատահում, բայց մի օր Հավ-Մարիկն իր ձվիկը կորցնում է:

«Վայ-վայ, ձվիկս ո՞ւր է կորել...» - վախեցած մտածում է նա: Դես է փնտրում, դեն է փնտրում՝ չի գտնում: Գնում-գնում է, հանդիպում է Բադիկ-Մադիկին:

Բարևում է, հարցնում է՝ ինչ կա, ինչ չկա, հետո նրա բնում մի ձվիկ է նկատում:


«Բադիկ-Մադիկ, այս ձվիկը հո իմը չէ՞», - հարցնում է նրան: «Զէ, չէ, իմն է», - հավատացնում է Բադիկը: Հենց այդ պահին ձվիկի կեղևը ջարդվում է ու ճուտիկ բադիկը գլուխը դուրս է ցցում՝ քաղաքավարի բարևում. «Ողջույն, ինչպե՞ս եք»: «Գնանք՝ ձվիկդ միասին փնտրենք», - առաջարկում է Բադիկ-Մադիկը, ու միասին շարունակում են ճանապարհը: Շուտով տեսնում են Սղիկ-Լորտուին:

Բարևում են, հետո Հավ-Մարիկը նկատում է, որ նրա բնում էլ ձվիկ կա ու հարցնում է. «Սղիկ-Լորտու, չլինի՞ թե այս ձվիկն իմն է»: «Զէ, ի՞նչ ես ասում, իմն է», - պատասխանում է Սղիկ-Լորտուն ու ցույց է տալիս հենց այդ պահին ձվից դուրս



եկած Փոքրիկ լորտուհին. «Տե՞ս, ճուտիկն էլ է իմը», - ասում է Փոքրիկ լորտունն էլ է քաղաքավարի բարևում Հավ-Մարիկին. «Բարի օր, ինչպե՞ս եք»: Սղիկ-Լորտուն, Բադիկ-Մադիկն ու Հավ-Մարիկը միասին գնում-գնում են՝ տեսնում են կանաչ ու ահեղ կոկորդիլոսին: «Բարի օր, Կոկո՛ր-Դիլոս: Այդ ի՞նչ ձվիկ է ավազի մեջ: Հո պատահե՞մաք իմը չէ՞», - հարցնում է Հավ-Մարիկը: «Ի՞նչ ես ասում, իմն է...», - պատասխանում է կոկորդիլոսը ու ցույց է տալիս ձվից հենց նոր դուրս եկած իր ձագուկին. «Տե՞ս, ձագուկն էլ է իմը»:

Այդ պահին բոլորի աչքն ընկնում է թփերի մեջ սպիտակին տվող ինչ-որ բանի: «Տես, տես, Հավ Մարիկ, ձվիկդ այս-



տեղ է», - ասում են նրանք միաձայն:

Մեկ էլ ձվիկի կեղևը ճաքում է ու մի դեղնամազիկ գլուխ է դուրս ցցվում միջից: Ջարմանքով չորս բոլորն է նայում, հետո տեսնում է Հավ-Մարիկին: «Բարև, մայրիկ, ես քո Պստիկ ճուտիկն եմ», - ասում է նա ու գալիս՝ մտնում է թփ տակ:



- Հավը, քաղը, լորտուն, կոկորդիլոսը, բոլորն էլ ծու են ածում: Նրանցից ո՞վ կենդանիների ո՞ր խմբին է պատկանում:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Թևիկներին խալեր սիրուն,
Թռչկոտել է շատ սիրուն:
(մազգվթ)

Գետն է մտնում ամեն օր,
Բայց մնում է միշտ էլ չոր:
(մնոթ)

Կտրում է քունը,
Չսկում է տունը...
Չավատարիմ է
Միշտ իր տիրոջը:
(մյուշ)

Մատ է ծակում՝ մոծակ չէ,
Ասեղ ունի՝ դերձակ չէ,
Գլորվում է՝ գնդակ չէ:
(դյցես)

Ո՞ր թռչունն է գույնզգույն,
Որ մեզ կրկնում է իսկույն:
(միռեսթ)

Առանց թելի ցանց է հյուսում
Ու իր կերը ցանցով որսում:
(մսմոռ)

Բարձրասրունք երկար վիզ,
Կտուց ունի երկու թիզ,
Կտուցովն է ծափծափում,
Իրար խփում կափկափում:
(մվեռսմ)

Ո՞ր թռչունն է ծառաբնակ՝
Ունի փոքրիկ, սիրուն տնակ,
Միշտ ծառերը վեր մազլցում,
Որդ ու թրթուր է նա կտցում:
(միվնսփտրոփ)

Մի թռչուն է նա խատուտիկ,
Փոքրիկ սանր գլխին տիտիկ,
Թե իր բնին դու մոտենաս,
Քիթը բռնած կհեռանաս:
(մոսոսպ)

Գլխին առած մի մեծ ծառ՝
Շրջում է լեռ ու անտառ:
(դրսվզձնդ)



ԳՂՈ ԳՐԵՏԱՆ

Անտառի եզրին ծղոտածածկ տանիքով մի ծռված խրճիթ էր կանգնած: Տնակի շուրջը փարթամ մոլախոտեր էին աճել: Տնակում Գրետա անունով մի ծույլ աղջիկ էր ապրում՝ իր փիսիկի հետ: Փիսիկի անունը Միգե էր: Գրետան այնքան ծույլ էր, որ միայն ուտելու համար էր անկողնուց վեր կենում, իսկ փիսիկին օրերով սոված-ծարավ էր թողնում ու ինչով պատահեր ծեծում էր, որովհետև Միգեն մաքրասեր էր՝ ամեն օր լվացվում էր: Ինքը՝ Գրետան, երբեք չէր լվացվում, ոչ էլ շորերն էր լվանում, իսկ տունը կեղտի մեջ կորել էր: Մի օր, երբ Գրետան շերեփն առած ընկել էր փիսիկի հետևից, Միգեն անտառ փախավ, որ փրկվի չար տիրուհուց ու սպասեց, մինչև մութն ընկնի: Երբ մթնեց, Միգեն



գաղտագողի տուն վերադարձավ: Զգույշ, որ Գրետային չարթնացնի, հավաքեց ունեցած-չունեցածը՝ օճառի կտորը, ատամի խոզանակը, սանրը, իր ամենասիրած խաղալիքը՝ թելի կծիկը և իր ապրուստի միջոցը՝ մկան թակարողը ու որոշեց փախչել տանից. էլ չէր կարող դիմանալ տիրուհու հալածանքներին: Կապոցն առած՝ ճամփա ընկավ հարևան գյուղը: Մի քիչ գնալուց հետո շրջվեց, որ մի վերջին անգամ հրաժեշտ տա տնակին, ու ի՞նչ տեսնի. տան բոլոր իրերը՝ ամանեղենը, սեղանը, աթոռները, վերնակը, բարձը, ներքնակը՝ բոլոր, բոլորը կենդանացել էին ու գնում էին իր հետևից: Պարզվում է՝ բոլորը զգվել էին միշտ կեղտոտ ու անխնամ լինելուց: Իրենց ի՞նչ էր պետք, որ երբեմն հոգ տանեին իրենց մասին, խնամեին, մաքրեին, մեկ-մեկ էլ

նորոգեին: Միայն Գրետայի կոշիկներն էին մնացել տեղում. մահճակալը փախչելուց առաջ աղջկան գետին էր դրել ուղիղ կոշիկների վրա, ու խեղճերը չէին կարողացել այդ ծանրության տակից փախչել: Վերջինը խրճիթը տեղից շարժվեց ու շտապեց, որ հասնի մյուսներին:

Առավոտը բացվեց, և արևի ճառագայթները խուսուտ տվեցին Գրետայի քիթը: Աղջիկն արթնացավ ու ի՞նչ տեսնի՝ ոչ տնակը կա, ոչ իրերը, ոչ էլ նույնիսկ փիսիկը: Վեր թռավ ու վազեց իր ունեցվածքը հետ բերելու:




- Ի՞նչ պիտի աներ Գրետան, որ հետ բերեր փախստականներին:

ՇՈՂԻԿԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Շողիկն, ինչպես միշտ, դասից ուշանում էր: Հնիհև մտավ դասարան, ներողություն խնդրեց ուսուցչից ու նստեց: Մեկ էլ լսեց, որ լուսամուտի կողքի նստարանին նստած Արտակը շշուկով իրեն է կանչում. «Շողիկ, գիրքդ մի հատ տուր, էլի»: Ուսուցչուհին մատյանն էր լրացնում և նրանց չէր նայում:

Շողիկը գիրքը շարտեց Արտակին, մեկ էլ՝ գրը՜նգ, գիրքը դիպավ լուսամուտին ու կոտրեց ապակին:

Բարեբախտաբար, Արտակը հասցրեց մի կողմ քաշվել: Ուսուցիչը խիստ բարկացավ, իսկ Շողիկը վախեցավ ու մտքում հետևություն արեց, որ անհրաժեշտ է մարզվել՝ հաջորդ անգամ գիրքն ավելի դիպուկ նետելու համար... Ջանգը հնչեց: Շողիկը որոշեց բուժետ գնալ, բայց քանի որ աստիճանների վրա հրմշտոց էր, հեծնեց բազրիքին ու ցած սահեց: Ցած սահեց ու թոմփաց հատակին: Մի կերպ, կաղալով, հասավ բուժետ: Բուժետում հերթ էր: Հոջե՞ր սպասելու: Ձեռքը երեխաների գլուխների վրայով երկարեցրեց ու փորձեց հասնել վաճառասեղանին շարված թեյի բաժակներին: Այդ պահին իր նման մի ուրիշ անհամբեր աշակերտ հերթի մեջ խցկվեց ու հրեց Շողիկին: Տաք թեյը թափվեց Շողիկի վրա: Վա՛յ, ոնց էր մրմռում: Ընկերները նրան բուժկետ ուղեկցեցին, որտեղ բուժքույր տիկին Վարսիկը քսուքով այրոցը դարմանեց: «Շուտ արեք, տիկին Վարսիկ», - շտապեցնում էր Շողիկը. - «Ֆիզկուլտից ուշանում եմ»: Երբ վազելով հասավ սպորտդահլիճ ուսուցիչը դեռ չէր եկել:




Շողիկը տեսավ անկյունում դրված «այծիկը», թափ հավաքեց, վազեց ու թռավ... Մի քանի օրից արձակուրդներ սկսվեցին: Ավա՞ղ, անհամբեր Շողիկը, ոտքը գիպսի մեջ, ստիպված էր նստել լուսամուտի մոտ ու տխուր-տրտուն նայել, թե բակում ինչպես են ուրախ-անհոգ խաղում իր ընկերները...



- Կարո՞ղ ես թվարկել Շողիկի վտանգավոր արարքները:

**Նկարիչը քանի՞ սխալ է թույլ տվել նկարում:
Կարո՞ղ եք գտնել:**






ՏՈՒՆ



- 1
- 2
- 3
- 4
- 5
- 6



-
-
-
-
-
-
-
-
-
-

-
-
-
-
-
-
- 2
-
-
-




-
-
-
-





ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ


Խաղն սկսում են «Տուն» շրջանակից՝ յուրաքանչյուրն իր խաղաքարով և շարժվում են պաթի ուղղությամբ: Մասնակիցները հերթով գառ են նետում և գառի թվին համապատասխան շրջանակներով առաջ են շարժվում: Այն խաղացողը, որի գառի թիվը ճիշտ «Դպրոց» է հասցնում, հաղթող է ճանաչվում: Եթե գառի թիվը «Դպրոց» հասնելու համար անհրաժեշտ թվից ավել է, խաղացողը գառի թվի չափով պետք է հետ գնա:


ԴՊՐՈՑ





 Եթե ընկել եք կարմիր շրջանակի վրա, նշանակում է ճանապարհը փակ է: Երկու հերթ քաց թողեք:

 Եթե ընկել եք դեղին շրջանակի վրա, որն ասում է՝ եղեք ուշադիր, մեկ հերթ քաց թողեք:

 Եթե ընկել եք կանաչ շրջանակի վրա, նշանակում է ճանապարհն ազատ է, առաջ շարժվեք և մեկ անգամ էլ գառ նետե՛ք:

 Եթե ընկել եք «Ստորգետնյա անցում» նշանի վրա, առաջ շարժվեք և մեկ անգամ էլ գառ նետե՛ք:

 Եթե ընկել եք «Անցումը փակ է» նշանի վրա, մեկ հերթ քաց թողեք:

 Եթե ընկել եք «h» տառով շրջանակի վրա, նշանակում է՝ խախտել եք ճանապարհային երթևեկային կանոններից մեկը: Մեկ «խախտում» քարտ քաշեք, քարտն առանցքից հանեք, քարտը վերադարձրեք կույտ և մեկ հերթ քաց թողեք:

 Եթե ընկել եք «Անցում» նշանի վրա, կարող եք անցնել փողոցը: «Փողոցը» անցե՛ք՝ մեկական շրջանակ առաջ շարժվելով և «Փողոց անցնելու կանոնների» թերթիկից քարտն առանցքից հանեք և վերադարձրեք կույտ: Շրջանակի համարին համապատասխանող կանոնը:



Փորձեք նկարում գտնել պատկերները



Պաղպաղակ



Եփոր



Սղոց

Կետ



Մեխ



Սանր



Մուկ



Ճաղկեփունջ



Ճպուռ



Չուկ



Թել-ասեղ



Կտունկ



Նետ



Մտի բանալի



Պատառաքաղ

1. Ով եմ ես

| | | |
|-------|--|------|
| Դաս 1 | Ինչով եմ նման և տարբեր մյուսներից..... | էջ 3 |
| Դաս 2 | Տեսնում եմ, լսում եմ, զգում եմ..... | էջ 6 |

2. Ես և իմ ընտանիքը

| | | |
|-------|--|-------|
| Դաս 1 | Իմ ընտանիքն ու ազգականները..... | էջ 11 |
| Դաս 2 | Փոխադարձ հարգանք և հոգատարություն..... | էջ 15 |
| Դաս 3 | Ժամանց և տոներ..... | էջ 21 |

3. Ես և դպրոցը

| | | |
|-------|-----------------------------|-------|
| Դաս 1 | Իմ դպրոցը, իմ դասարանը..... | էջ 25 |
| Դաս 2 | Դասարանական կանոններ..... | էջ 29 |

4. Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը

| | | |
|-------|----------------------------|-------|
| Դաս 1 | Իմ փոքրիկ աշխարհը..... | էջ 33 |
| Դաս 2 | Ինչպե՞ս կողմնորոշվենք..... | էջ 38 |

5. Իմ քաղաքը, իմ գյուղը

| | | |
|-------|----------------------|-------|
| Դաս 1 | Ամենից լավ տեղը..... | էջ 41 |
| Դաս 2 | Լինենք հոգատար..... | էջ 46 |

6. Բնությունն իմ շուրջ

| | | |
|--------|--|--------|
| Դաս 1 | Ինչ է բնությունը..... | էջ 52 |
| Դաս 2 | Կենդանի և անկենդան բնություն..... | էջ 56 |
| Դաս 3 | Բույսեր..... | էջ 60 |
| Դաս 4 | Բույսերի բազմազանությունը..... | էջ 63 |
| Դաս 5 | Բույսերը և մարդը..... | էջ 69 |
| Դաս 6 | Վայրի և մշակովի բույսեր..... | էջ 72 |
| Դաս 7 | Երկրագնդի մյուս բնակիչները..... | էջ 77 |
| Դաս 8 | Միջատներ..... | էջ 80 |
| Դաս 9 | Թռչուններ..... | էջ 85 |
| Դաս 10 | Ձկներ, երկկենցաղներ, սողուններ..... | էջ 90 |
| Դաս 11 | Կաթնասուններ..... | էջ 94 |
| Դաս 12 | Ընտանի և վայրի կենդանիներ, մարդը և կենդանիները..... | էջ 99 |
| Դաս 13 | Փոփոխությունները բնության մեջ..... | էջ 103 |

7. Առողջություն և անվտանգություն

| | | |
|-------|-------------------------------|--------|
| Դաս 1 | Սնունդ և մարզանք..... | էջ 109 |
| Դաս 2 | Հիգիենա..... | էջ 114 |
| Դաս 3 | Անվտանգությունը տանը..... | էջ 118 |
| Դաս 4 | Անվտանգությունը փողոցում..... | էջ 123 |
| Դաս 5 | Վերհիշենք սովորածը..... | էջ 126 |

| | |
|---------------|--------|
| Հավելված..... | էջ 134 |
|---------------|--------|



Թորոսյան Նունե, Ալեքսանյան Լուսինե

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք

Հրատարակիչ-տնօրեն՝

Հրատարակ. խմբագիր՝

Սրբագրիչ՝

Համակարգչային

ծևավորող՝

Ս. Չունգուրյան

Ծ. Հովհաննեսյան

Ա. Հակոբյան

Ն. Մելիքյան

Չափսը՝ 70x100 1/16: Տպագր. 10 մամ.:

Տպաքանակը՝ 6000: Պատվեր՝ 997:

«Աստղիկ Գրատուն» հրատարակչություն

ք. Երևան, Նորք 2-րդ նրբացք, 32 տուն

Հեռ./ֆաքս: (374 10) 52-88-00

Էլ-Փոստ: ast_gratun@yahoo.com

Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ տպարանում



ԱՄՏՐԻԿ ԳՐԱՏՐԻՆ